ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուստարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ..... էջ 3

ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ ..... էջ 5

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ..... էջ 10

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ..... էջ 14

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ..... էջ 18

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ..... էջ 36

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ..... էջ 36

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՈՒԹՀՄ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... էջ 40

ԲՈՒՀ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ..... էջ 41

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... էջ 43

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվետու ժամանակահատվածում Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում գործել են չորս մասնագիտական ամբիոններ. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն - ամբիոնի վարիչի ՊԿ Լիլիթ Մարգարյան, Աշխարհագրության և սերվիսի ամբիոն- ամբիոնի վարիչի ԺՊ Գայանե Ավետիսյան, Կենսաբանության և քիմիայի ամբիոն - ամբիոնի վարիչի ԺՊ Սամվել Ալեքսանյան, Տնտեսագիտության ամբիոն - ամբիոնի վարիչի ԺՊ Արթուր Մկրտչյան:

Ֆակուլտետը 2022-23 ուստարում իրականացրել է մասնագիտական կրթական ծրագրեր հետևյալ կրթական աստիճաններով. բակալավրի կրթական աստիճան, առկա ուսուցում - 12 մասնագիտություններով, հեռակա ուսուցում-7 մասնագիտություններով, մագիստրոսի կրթական աստիճան, առկա ուսուցում - 8 մասնագիտություններով:

Հետազոտողի կրթական աստիճան (ասպիրանտուրա, հայցորդություն)– 2 մասնագիտություններով:

Ֆակուլտետի շրջանավարտներն աշխատում են ՀՀ մարզերի տարբեր առևտրային կազմակերպություններում, մասնավորապես բանկերում, ձեռնարկություններում, ուսումնական և այլ հաստատություններում: Ֆակուլտետում առկա են ժամանակակից սարքավորումներով փորձասենյակներ, համակարգչային տեխնիկայով հարուստ մասնագիտական լսարաններ:

Ֆակուլտետի դասախոսները և ուսանողները ակտիվ մասնակցում են համալսարանի կողմից իրականացվող տարբեր հանրապետական և միջազգային ծրագրերում: Ներբուհական դրամաշնորհի մրցույթի արդյունքում ֆինանսավորվել են երկու աշխատանքներ: Ֆակուլտետի ամբիոնների կողմից իրականացվել են նաև ծրագրեր ֆինանսավորված ՀՀ ԿԳՄՍ Գիտության պետական կոմիտեի կողմից:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի առաքելությունը

- Իրականացնել եռաստիճան ուսուցում՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական աստիճաններով:
- Նպաստել ՇՊՀ-ում բարեփոխումների և զարգացումների գործընթացին՝ ստեղծելով միջազգայնորեն մրցունակ և դինամիկ ծրագրեր:
- Բարելավել և զարգացնել ՇՊՀ-ի առաքելությանը համապատասխան արդյունավետ գործունեություն ծավալող մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսներով ապահովված կառավարման համակարգ:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի տեսլականն ու նպատակները

- Ձևավորել ուսանողակենտրոն միջավայր կրթության որակի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ինչպես նաև արտաքին և ներքին շահակիցների հետ մասնակցային համագործակցության և հաշվետվողականության համապատասխան մշակույթ:
- Դառնալ աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթական ծառայություններ մատուցող ժամանակակից մրցունակ ուսումնական և գիտահետազոտական ստորաբաժանում՝ նպաստելով ՇՊՀ-ի՝ որպես Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական և քաղաքացիական հասարակության ձևավորման յուրահատուկ «համայնքային կենտրոն»:
- Նպաստել ՇՊՀ-ի՝ որպես առաջատար համալսարանի կայացմանը, խրախուսելով շրջանավարտների շարունակական մասնակցությունը մասնագիտական վերապատրաստումներին և միջֆակուլտետային գիտական համագործակցությանը:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կազմում աշխատող ամբիոնները հաշվետու տարում իրականացրել են զգալի աշխատանք: ՇՊՀ-ում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում 2022 թ. օգոստոսի 15-ին ստեղծվել է «Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնը, որը թողարկում է բակալավրի կրթական աստիճանի 4 և մագիստրոսական կրթական աստիճանի երկու մասնագիտություններ:

ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դասախոսական համակազմը ըստ ամբիոնների

2022-2023 ուստարի

№	Ամբիոնի անվանումը	Դասախոսների թիվը	Համատեղություն (ժամավճար)	Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր	Գիտությունների թեկնածու, դոցենտ	Առանց գիտական աստիճանի և կոչման	Ասպիրանտներ, հայցորդներ
1	Աշխարհագրության և սերվիսի	13	4	1	9	3	2
2	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ	29	4	3	16	10	-
3	Տնտեսագիտության	19	12	0	12	7	1
4	Կենսաբանության և քիմիայի	22	5	1	15	6	-
	Ընդամենը	**83**	**25**	**5**	**52**	**26**	**3**

Ֆակուլտետի դասախոսների 68,7 տոկոսն ունի գիտական աստիճան և կոչում: Սա բավականին բարձր ցուցանիշ է, սակայն վերլուծությունը ցույց է տալիս, որ աստիճան և կոչում ունեցող դասախոսների 90 տոկոսից ավելին ավելի քան 30 տարեկան են, իսկ ֆակուլտետի ասպիրանտների թիվը ընդամենը չորսն է:

Ֆակուլտետում զգալի թիվ են կազմում համատեղությամբ (ժամավճարային) դասախոսները: Ընդհանուր առմամբ ֆակուլտետում աշխատում են 25 ժամավճարային դասախոսներ, որը կազմում է ընդհանուր ֆակուլտետի ՊԴ կազմի 30%-ը: Ժամավճարային դասախոսների առավել մեծ թիվ առկա է Տնտեսագիտության ամբիոնում, որտեղ աշխատող 19 դասախոսներից հիմնական են 7-ը:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմն ըստ տարիքային խմբերի:

2022-2023 ուստարի

Տարիքային սանդղակ	Ամբիոններ							
	Աշխարհագրության և սերվիսի		Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ		Կենսաբանության և քիմիայի		Տնտեսագիտության	
	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%
25-30	1	7,1	0	0	0	0	0	0
31-40	2	14,2	8	29	2	9	5	27,7
41-50	3	21,5	7	25	7	32	3	16,6
51-60	4	28,6	6	21	8	36	7	38,8
61-70	2	14,2	4	14	4	18	2	11,1
71 և ավելին	2	14,2	3	11	1	5	1	5,5

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գերակշիռ մասը կազմում են միջին տարիքային աշխատողները (41-60 տարեկան), որոնք կազմում են ամբողջ դասախոսական կազմի 54,2 տոկոսը: Մինչև 30 տարեկան ընդամենը 1 դասախոս է աշխատաում: Ինչը առավել մտահոգիչ է: 30-ից 40 տարեկան դասախոսների թիվը կազմում է 17, որը ամբողջ դասախոսական կազմի ընդամենը 20,4 տոկոսն է:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գենդերային կառուցվածքը:

2022-2023 ուստարի

Դասախոսական կազմի գենդերային կառուցվածքը	Ամբիոններ								Ընդամենը
	Աշխարհագրության և սերվիսի		Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ		Կենսաբանության և քիմիայի		Տնտեսագիտության		
	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	Թիվ	%	
Արական	9	69,2	19	65,5	6	27,3	8	42,1	42
Իգական	4	30,8	10	34,5	16	72,7	11	57,9	41
									83

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողների թիվը: 2022-2023 ուստարի

Կրթական աստիճան, ուսուցման ձև	Կուրս	Աշխարհագր.	Սերվիս	Զբոսաշրջիկ.	Քարտեզագր.	Կենսաբան.	Դեղ.քիմիա	Մաթեմատ.	ՏՏ	ԻԿՄ	Շուկայագիտ.	Կառավարում	Հաշվապահ.	Մագիստրատուրա								Ընդամենը
														Աշխարհագ.	Կ/տուրիզմ	Կենսաբ.	Կ/տեխմոլ	Մաթեմ.	Ֆիզիկա	Կառավ.	ԻԿՄ	
Բակալավր (առկա)	1	0	23	0	0	4	3	0	5	4	0	11	0									
	2	5	19	0	4	7	7	0	7	7	0	7	3									
	3	2	12	3	3	6	2	2	6	5	0	14	6									
	4	4	7	8	8	10	6	2	6	1	1	9	6									
Ընդամենը		**11**	**61**	**11**	**15**	**27**	**18**	**4**	**24**	**17**	**1**	**41**	**15**									**245**
Բակալավր (հեռակա)	1	-	12	-	0	0	1	-	3	-	-	3	0									
	2	-	9	-	5	0	6	-	13	-	-	23	0									
	3	-	9	-	4	0	4	-	4	-	-	17	0									
	4	-	11	-	3	3	3	-	8	-	-	15	0									
	5	-	3	-	1	0	0	-	3	-	-	10	4									
Ընդամենը		**-**	**44**	**-**	**13**	**3**	**14**	**-**	**31**	**-**		**68**	**4**									**177**
Մագիստրատուրա	1													4	4	1	4	7	1	11	-	
	2													-	8	6	1	9	0	17	2	
Ընդամենը		**11**	**105**	**11**	**28**	**30**	**32**	**4**	**55**	**17**	**1**	**109**	**19**	**4**	**12**	**7**	**5**	**16**	**1**	**28**	**2**	**75**
Ընդամենը																						**497**

Դասախոսների ՈւՕ կազմի և ուսանողների թվի հարաբերակցությունը:

2022-2023 ուստարի

№	Ամբիոնի անվանումը	Դասախոսների թիվը	Ուսանողների թիվը	Դասախոս/ուսանող (գործակից)	ՈւՕ կազմ	Ուսանող/ ՈՒՕ կազմ (գործակից)	Ամբիոն		Դասախոսի ծանրաբեռն. (միջին)	Դասախոս դրույք (գործակից)	Ուսանող դրույք (գործակից)
							ժամ	դրույք			
1	Աշխարհագրության և սերվիսի	13	171	13,1	1	171	9801	11,0	753,9	0,84	15,5
2	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղ. տեխնոլոգիաների	29	93	3,2	1	93	14699	16,25	506,8	0,56	5,7
3	Տնտեսագիտության	19	157	8,2	1	157	13158	13,25	692,5	0,69	11,8
4	Կենսաբանության և քիմիայի	22	74	3,3	2	37	10420	12,25	473,6	0,55	6,0
5	Դեկանատ	-	-	-	1	-	-	-	-	-	-
Ընդամենը		**83**	**495**	**5,96**	**6**	**82**	**48078**	**52,75**	**579,2**	**0,63**	**9,4**

Ֆակուլտետի դասախոսների և ուսանողների թվի հարաբերակցությունը թույլ է տալիս ստանալու ամբիոնների ծանրաբեռնվածության և արդյունավետության պատկերը: Աղյուսակի տվյալների հիման վրա կարելի է ասել, որ ծանրաբեռնվածության առավել բարձր գործակից ունի «Աշխարհագրության ամբիոնը», որը կազմում է 13,1, իսկ ամենացածրը՝ «Կենսաբանության և քիմիայի» ամբիոնը՝ 3,3: Նույն պատկերն է նաև դրույքաչափերի ցուցանիշներում: Ամենաբարձր դրույքաչափը մեկ դասախոսի հաշվարկով առկա է «Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնում՝ 0,84, իսկ ամենացածրը՝ «Կենսաբանության և քիմիայի»:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետը իրականացրել է 20 կրթական ծրագիր, որտեղ ընդգրկված են եղել 497 ուսանողներ: Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի տարբեր բաժիններում վերականգնվել են 37 և հեռացվել 8 ուսանողները: Արդյունքում ուսանողների թիվը կազմել է 528: Առավել մեծ թվով ուսանողներ ունեցել է «Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնը՝ 171, իսկ ամենաքիչը՝ «Կենսաբանության և քիմիայի» ամբիոնը՝ 74:

Հեռացված ուսանողներ:

2022-20233 ուստարի

N	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Կրթական աստիճան	Մասնագիտություն Կուրս	Ակադեմիական պարտք	Վարձավճարի պարտք (ՀՀ դրամ)
1	Սարոյան Պետո Բաբկենի	Մագիստրատուրա	Կառավարում I	18 կրեդիտ	-
2	Մովսիսյան Արամ Լևոնի	Մագիստրատուրա	Կայուն զբոս. I	30 կրեդիտ	130 000
Հեռակա ուսուցում					
1	Խաչատրյան Նարեկ Արմենի	Բակալավր	Տեղեկատվ.տեխ. I	24 կրեդիտ	95 000+150 000
2	Մակարյան Լևոն Միքայելի	Բակալավր	Քարտեզ/կադ. II	24 կրեդիտ	150 000
3	Վարդանյան Աշոտ Արմենի	Բակալավր	Կառավար II	24 կրեդիտ	175 000
4	Առաքելյան Հակոբ Համլետի	Բակալավր	Տեղեկատվ.տեխ. II	12+24 կրեդիտ	255 000
5	Ավետիսյան Աղասի Կամոյի	Բակալավր	Սերվիս IV	24 կրեդիտ	125 000
6	Մկրտչյան Կորյուն Արծրունու	Բակալավր	Կառավար. IV	24 կրեդիտ	175 000

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետից հեռացվել են 8 ուսանողներ, որոնցից մեկը միայն ակադեմիական պարտքերի համար: Բոլոր հեռացված ուսանողներին ժամանակին տրվել է պատշաճ ծանուցում փոստով և հեռախոսազանգով:

Հեռացված ուսանողները կազմում են ֆակուլտետի ուսանողական համակազմի ընդամենը 1,2 տոկոսը, ինչը ներկայիս պայմաններում մեծ թիվ չի կազմում: Չնայած սրան ֆակուլտետում անհրաժեշտ է արդյունավետ աշխատանք տանել հեռացումների թիվն էլ ավելի կրճատելու համար:

Վերականգնված և տեղափոխված ուսանողների շարժը 2022-2023 ուստարի

№	Ուսանողի անուն, ազգանուն, Հայրանուն	Հրամանի համարը	Մասնագիտություն	Կուրս
1	Հովհաննիսյան Ռոբերտ Ավետիքի	Հր.248, 26.09.2022թ.	Կառավարում	2 /առկա/
2	Գասպարյան Թամարա Լևոնի	Հր.248, 26.09.2022թ.	Դեղագործական քիմիա	2 /առկա/
3	Համբարյան Արուսյակ Արթուրի	Հր.240, 23.09.2022թ.	Կենսաբանություն	2 /առկա/
4	Բաբայան Տիգրան Արսենի	Հր.240, 23.09.2022թ.	Կայուն զբոսաշրջություն	2 /առկա/
5	Պողոսյան Սոֆյա Արկադիի	Հր.247, 26.09.2022թ.	Քարտեզ. և կադաստրային գործ	2 /առկա/
6	Ասատրյան Իրինա Ժորժիկի	Հր.247, 26.09.2022թ	Քարտեզ. և կադաստրային գործ	2 /առկա/
7	Կարապետյան Անահիտ Գրիգորի	Հր.235, 19.09.2022թ	Դեղագործական քիմիա	2 /առկա/
8	Հոլիկյան Արման Նելսոնի	Հր 301, 07.11.2022թ	Տեղեկատվական տեխնոլոգիա	2 /հեռակա/
9	Ավետիսյան Աղասի Կամոյի	Հր 301, 07.11.2022թ	Սերվիս	4 /հեռակա/
10	Արթուր Գառնիկի Ամիրխանյանին	Հր 301, 07.11.2022թ	Կառավարում	2 /հեռակա/
11	Կարեն Ռուստամի Մանուկյանին	Հր 305, 07.11.2022թ	Կառավարում	2 /հեռակա/
12	Գարեգին Սարգսի Զաքարյանին	Հր 306, 07.11.2022թ	Կառավարում	2 /հեռակա/
13	Ղումաշյան Ռիմա Արտյոմի	Հր 235, 19.09.2022թ	Դեղագործական քիմիա	2 /հեռակա/
14	Մարտիրոսյան Մանվել Սամվելի	Հր 235, 19.09.2022թ	Դեղագործական քիմիա	2 /հեռակա/
15	Բարսեղյան Գայանե Գևորգի	Հր 235, 19.09.2022թ	Դեղագործական քիմիա	2 /հեռակա/
16	Մխիթարյան Նաիրա Զավենի	Հր 235, 19.09.2022թ	Կառավարում	2 /հեռակա/
17	Փահլևանյան Լիլիթ Մարտիրոսի	Հր 235, 19.09.2022թ	Կառավարում	2 /հեռակա/
18	Սարգսյան Ռուզաննա Արմանի	Հր 235, 19.09.2022թ	Սերվիս	2 /հեռակա/
19	Մուրադյան Ժենյա Երվանդի	Հր 235, 19.09.2022թ	Սերվիս	2 /հեռակա/
20	Մելիքյան Սոֆի Մանվելի	Հր 235, 19.09.2022թ	Սերվիս	2 /հեռակա/
21	Ունուսյան Էմիլ Սեյրանի	Հր 124, 08.04.2022թ	Կառավարում	2/հեռակա/
22	Հովհաննիսյան Անի Հովհաննեսի	Հր 124, 08.04.2022թ	Կառավարում	2/հեռակա/

23	Վարոսյանին Մարիամ Արկադիի	Հր 247 26. 09.2022թ.	Սերվիս	2/առկա/
24	Զաքարյան Մանիկ Համլետի	Հր 247 26. 09.2022թ.	Դեղագործական քիմիա	2/առկա/
25	Գրիգորյան Հարություն Կարենի	Հր 57 27.02.2023թ.	Քարտեզ. և կադաստրային գործ	3 /առկա/
26	Մարտիրոսյան Սեդրակ Գագիկի	Հր 119 07.04.2023թ.	Քարտեզ. և կադաստրային գործ	4 /հեռակա/
27	Հարությունյան Թելման Դանիելի	Հր 119 07. 04.2023թ.	Սերվիս	1 /հեռակա/
28	Իգիթյան Լիպարիտ Անդրանիկի	Հր 119 07. 04.2023թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	3/հեռակա/
29	Խաչատրյան Աշոտ Գրիգորի	Հր 119 07. 04.2023թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2/հեռակա/
30	Էլբակյան Շահեն Արտակի	Հր 301 07. 11.2022թ.	Կառավարում	3 /հեռակա/
31	Սահակյան Անժելա Խաչատուրի	Հր 301 07. 11.2022թ.	Սերվիս	1 /հեռակա/
32	Տարոն Վահեի Թաղևոսյանին	Հր 56 27. 02.2023թ.	Սերվիս	2 /հեռակա/
33	Մկրտչյան Մերի Արտյոմի	Հր 247 22. 09.2023թ.	Սերվիս	2 /հեռակա/
34	Պավլեյան Էլեն Երվանդի	Հր 247 22. 09.2023թ.	Դեղագործական քիմիա	2 /հեռակա/
35	Բդոյան Վոլոդյա Գևորգի	Հր 247 22. 09.2023թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2 /հեռակա/
36	Ալեքյան Լիլիթ Վրեժի	Հր 247 22. 09.2023թ.	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2 /հեռակա/
37	Վարաժյան Լևոն Տիգրանի	Հր 247 22. 09.2023թ.	Կառավարում	2 /հեռակա/

Հաշվետու տարում Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում վերականգնված և տեղափոխված ուսանողները 37 են: Դրանցից 13 շարունակական կրթության ծրագրով, որը կազմում է տեղափոխված և վերականգնված ուսանողների 35 տոկոսը: Պետք է նշել, որ այս ծրագրով ուսանողների մուտքը հեռակա բաժինների 2-րդ կուրսեր բավականին մեծ է, իսկ «Սերվիս», «Դեղագործական քիմիա» բաժիններում մշտապես լինում է մրցույթ:

Ընդհանուր առմամբ վերականգնված և տեղափոխված ուսանողները կազմում են ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թվի 7,4 տոկոսը, ինչը բավականին մեծ թիվ է և վկայում է ուսանողական համակազմի զգալի շարժունակության մասին:

Ուսանողների թվի տարեցտարի նվազման պատճառներից մեկը հանդիսանում է բնագիտամաթեմատիկական հոսքի նկատմամբ դիմորդների նվազ հետաքրքրվածությունը, բնակչության արտագաղթը, դիմորդ-շրջանավարտների քանակի տարեցտարի նվազումը: Ֆակուլտետի ամբիոններն այս առումով շատ անելիքներ ունեն: Առաջին հերթին անհրաժեշտ է դպրոցներում մասնագիտական կողմնորոշում սկսել ոչ թե ավագ, այլ հիմնական դպրոցից: Հիմնական դպրոցների հետ կնքելով համագործակցության պայմանագրեր՝ ամբիոնի հետ:

Միաժամանակ դասախոսների կողմից անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր ամբիոնների մասնագիտությունների գծով հետաքրքրվածության բարձրացման և լրացուցիչ գիտելիքներ ստանալու ուղղությամբ: Որոշակի թեմաներով դպրոցներում դասախոսների կողմից ցանկալի է անցկացնել դասախոսություններ, «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Մաթեմատիկա» և

մյուս մասնագիտությամբ սովորող ուսանողների օգնությամբ կազմակերպել հետաքրքրաշարժ միջոցառումներ, վիկտորինաներ և այլն: Ավագ դպրոցների աշակերտների համար շարունակել լրացուցիչ պարապմունքները ընդունելության մուտքի հաղթահարման նպատակով: Հիմնական խնդիր է հանդիսանում Շիրակի մարզի համայնքների դպրոցների շրջանավարտների ներգրավվածությունը կազմակերպվող պարապմունքներին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի կարևորագույն խնդիրներից է եղել մասնագիտական կրթական ծրագրերի բարելավումը և դրանց արդյունավետության բարձրացումը: Բոլոր ամբիոններում ստեղծվել են մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեթոդական հանձնաժողովներ՝ ՊԴ կազմի ներկայացուցիչների, գործատուների, ուսանողների, շրջանավարտների մասնակցությամբ: Գործատուների հետ պարբերաբար իրականացվել է հանդիպումներ՝ կապված աշխատաշուկայի պահանջների փոփոխությունների հետ:

2022-2023 ուստարում ֆակուլտետի 12 դասախոսներ մասնակցել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կոնտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամի կողմից համալսարանում կազմակերպված (25-27.11.2022թ.), «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման մեխանիզմները» խորագրով վերապատրաստմանը:

2022թ. հունիսի 5-9 ֆակուլտետի թվով 25 դասախոսներ մասնակցել են «ՄԿԾ-ի բարելավում, մեխանիզմներ և գործիքակազմ» խորագրով վերապատրաստմանը: Նշված վերապատրաստման արդյունքները Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից ներկայացվել են ֆակուլտետի ՊԴ կազմի բոլոր ներկայացուցիչներին: Վերապատրաստումից հետո մասնակիցների շրջանում Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի և Մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվեցին և անցկացվեցին վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Դասընթացի վերջնարդյունքներին միտված գնահատման մեթոդներ
2. Դասընթացի վերջնարդյունքներին միտված ուսումնառության և դասավանդման մեթոդներ

2022-2023 ուտարում ֆակուլտետի բոլոր ամբիոններում իրականացվել են բակալավրի կրթական ծրագրի բարելավման գործընթացներ: ՇՊՀ ՌԾ, ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցին համահունչ իրականացվում են կրթական ծրագրերի բարելավման գործընթացներ, որոնք ներառում էր հետևյալ գործունեությունները.

Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից ֆակուլտետի ամբիոններին է տրվել աշխատանքային և բազային ուսումնական պլանների նոր տարբերակներ՝ վերանայված ընդհանուր հումանիտար և հասարակակագիտական, բնագիտական, ընդհանուր մասնագիտական, կամընտրական և հետազոտական կրթամասերով:

Ամբիոններին հանձնարարվել է իրականացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) նույն կրթական ծրագրերը իրականացնող ամբիոնների հետ:

Համեմատական վերլուծության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրակացությունները. մասնագիտական դասընթացների քանակով տարբերությունը բուհերի միջև մեծ չէ, իսկ կրթական ծրագրերի տարբերությունները բավականին քիչ են, որն էլ չի կարող խոչընդոտ հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունումում ուսանողների շարժունությանը՝ նույն

մասնագիտության գծով բուհից բուհ տեղափոխությանը, որի դեպքում տարբերությունները օրենքով սահմանված են առավելագույնը 20 կրեդիտ (5-8%) (տես՝ Բուհերում սովորողների ակադեմիական շարժունության կարգը, մաս III, կետ 11):

Հաշվետու ուսումնական տարում ֆակուլտետի բոլոր ամբիոններում իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ ամբիոնի ՊԴ կազմի հետ, ԿԾ-ի բարելավման նպատակով ձևավորված հանձնախմբի հետ, որտեղ ներգրավված են ուսանողներ, շրջանավարտներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ, իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ:

Իրականացված քայլերի արդյունքում հաստատման է ներկայացվել ուսումնական պլանների աշխատանքային և բազային նոր, լավարկված տարբերակները: Մեկնարկվել է նոր ուսումնական պլաններին համապատասխան մասնագրերի, նոր ձևաչափերով առարկայական նկարագրիչների և թեմատիկ օրացուցային պլանների բարելավման գործընթացը՝ ՈՈՇ-ին համահունչ վերջնարդյունքների և յուրաքանչյուր վերջնարդյունքի ստուգման համար հանձնարարականների պատրաստմամբ:

Գործընթացի ավարտին ակնկալվում է ունենալ լավարկված ԿԾ, ԿԾ-ում կամընտրական և հետազոտական բաղադրիչների առկայություն, գործատուների և ուսանողների՝ ստացած կրթությունից բավարարվածության մակարդակի բարձրացում, ԿԾ-ի մրցակցության բարձրացում:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը, որդեգրելով բուհի գործունեության բոլոր ոլորտներում կառավարման գործընթացների առանցքային սկզբունքները (ՊԻԳԲ շրջափուլի հետևողական կիրառմամբ), արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությամբ ու մասնակցայնության ապահովմամբ, շահակիցների ու շահառուների առջև թափանցիկության ու հաշվետվողականության գործառնման ապահովմամբ իրականացրել է հետևյալ հիմնական գործառույթները.

1. ՄԿԾ-ների բարելավման մեխանիզմների ներդրմանն ու զարգացմանը միտված՝ ՀՀ ՈԱԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել են եռօրյա վերապատրաստումներ որակի ներքին ապահովման համակարգի աշխատակիցների, ՄԿԾ-ների պատասխանատուների, ՊԴ և վարչական կազմերի համար հետադարձ կապի ապահովմամբ: Վերապատրաստումները նպատակ են հետապնդել՝ գնահատելու ՄԿԾ-ի բարելավման անհրաժեշտությունը, պլանավորելու ուսանողի առաջընթացը, դասավանդման մեթոդ ↔ ուսումնառության մեթոդ ↔ գնահատման մեթոդ /հանձնարարականներ կապը: Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի ԺՊ Ն. Ավետիսյանի համակարգմամբ և ղեկավարությամբ 2023թ. հունիսի 3-17- ը իրականացվել են «Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավում. մեխանիզմներ և գործիքակազմ» վերապատրաստումները:

Մասնագիտական ամբիոններում կատարվել են ներքին և արտաքին շահակիցների ու շահառուների կարիքների վերհանում, գնահատման համակարգի լավարկման և կիրարկման նպատակով՝ կարիքների վերհանում:

2. Հաշվետու տարում մասնագիտական ամբիոններում կազմվել են կրթական ծրագրերի բարելավման պլաններ՝ նկատի ունենալով ներքին և արտաքին շահառուների դիտարկումները: Բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի

ՄԿԾ-ների մասնագրերի, ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի լրամշակման գործընթացի կազմակերպում և վերահսկում:

3.ՇՊՀ-ում 2023-2024 ուսումնական տարվանից առաջին կուրսերում արդեն ներդրվել են բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի բարելավված կրթական ծրագրեր: ՄԿԾ-ների բարելավման գործողությունները 2022-2023 ուսումնական տարում իրականացվել են հետևյալ փուլերով՝

Ա.Բենչմարքինգի իրականացում՝ նպատակ հետապնդելով լավագույն փորձի ուսումնասիրությամբ բարելավել ՄԿԾ-ների բովանդակությունը՝ աշխատաշուկայի պահանջներին, ուսանողների մասնագիտական կարիքներին համահունչ, նպաստելով ուսանողների ակադեմիական շարժունությանը:

Բ.Ուսումնական պլանների բարելավում:

Գ.ՄԿԾ-ների քարտեզագրում, ՄԿԾ-ների վերջնարդյունքների ու դասընթացների վերջնարդյունքների համահնչեցում:

Դ.ՄԿԾ-ների պրակտիկաների տևողության վերանայում՝ ուսանողների գործնական կարողությունները զարգացնելու նպատակով:

Ե.Թեմատիկ օրացուցային պլանների բովանդակային և ձևաչափային բարելավում՝ դասավանդման մեթոդ ↔ ուսումնառության մեթոդ ↔ գնահատման մեթոդ /հանձնարարականներ համահնչեցմամբ:

Զ.Գնահատման համակարգի բարելավում՝ ելակետ ունենալով դասընթացների վերջնարդյունքների և հանձնարարականների համահնչեցմամբ արժանահավատության ապահովումը:

Այս փուլերի իրականացման ընթացքում կիրառվում և կիրառվելու են տարբեր մեխանիզմներ, մասնավորապես՝

- ՄԿԾ-ների արդյունավետ կառավարմանը միտված՝ դրանց մշտադիտարկման և բարելավման շարունակական գործընթացի իրականացման համար յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար ձևավորվել են մեթոդական հանձնաժողովներ՝ ՄԿԾ-ների պատասխանատուների նախագահությամբ՝ ներառելով գործատուների, շրջանավարտների, ուսանողների, ՊԴ կազմի ներկայացուցիչների: Ամբիոններում կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ հանձնաժողովների հետ՝ վերհանելով ՄԿԾ-ների բովանդակային և ձևաչափային խնդիրները:

❖ Հստակեցվել և իրագործվել են ՄԿԾ-ների պատասխանատուների գործառույթները:

❖ Ֆակուլտետը, ըստ համապատասխան հանձնարարականների, մասնակցել է ներքին իրավական մի շարք ակտերի լավարկմանն ու մշակմանը, միաժամանակ մասնակցայնություն է դրսևորել ՇՊՀ-ի Զարգացման ռազմավարական ծրագրի աշխատանքային, ապա՝ համապատասխան քննարկումներից հետո՝ նախագծային տարբերակների քննարկման գործընթացում:

Ֆակուլտետում իրականացվել են նաև բուհի գործառույթներից բխող ամենամյա գործողություններ՝ մասնագիտական

ամբիոնների ուսումնական բեռնվածությունների կազմումը, կատարման վերահսկումը, ինչպես նաև բակալավրի (առկա/հեռակա) և մագիստրատուրայի ուսուցման դասատախտակների կազմումը և վերահսկումը, ուսումնական գործընթացի իրականացման ապահովումը լսարաններով, առկա և հեռակա ուսուցման գործընթացի իրականացման և դասամատյանների պատշաճ գործառնության վերահսկումը:

Իրականացվել են ավարտական, ամփոփիչ և քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը՝ ֆակուլտետի խորհրդում քննարկելով ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում նաև քննարկվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների առաջարկություններն ու դիտարկումները,

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ուսումնական գործընթացը Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում ընթացել է ըստ նախապես կազմած

աշխատանքային և ուսումնական պլանների: Պայմանավորված մասնագիտական առանձնահատկություններով ֆակուլտետի բոլոր ամբիոններում իրականացվել են մի քանի տեսակի պրակտիկաներ: Հաշվետու տարում կազմակերպվել է մանկավարժական, արտադրական, իսկ մագիստրատուրայում՝ գիտահետազոտական պրակտիկաներ:

Ֆակուլտետի պրակտիկաների զգալի մասը մանկավարժական պրակտիկան է, որը ուսումնական գործընթացի ամենակարևոր օղակներից է, քանզի բուհի հիմնական առաքելությունը մանկավարժի որակավորմամբ մասնագետների պատրաստումն է: Այս հարցում ՇՊՀ-ն եղել և շարունակում է մնալ Շիրակի մարզի ուսուցիչների պատրաստման հիմնական դարբնոց:

Դասալսումները և քննարկումները ցույց են տվել, որ դեռևս մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հարցում կան թերացումներ:

Մանկավարժական պրակտիկայի ժամանակ, շատ դեպքերում ուսանողը փորձում է անցկացնել դասը նույնատիպ մոտեցմամբ, ինչպես արվում է ուսուցչի կողմից: Բայց և առավել շատ են այն դասերը, որոնցում ուսանողը փորձում է լինել առավել ինքնուրույն՝ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ և ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում:

Ֆակուլտետի ամբիոններում իրականացված դասալսումները և համատեղ քննարկումները դասախոսի և առարկայական մեթոդական խորհուրդների հետ կամրապնդի բուհ-դպրոց կապը և կօգնի տվյալ դասախոսին վերանայելու դասավանդվող առարկաների բովանդակությունը՝ հաշվի առնելով այսօրվա դպրոցի պահանջները:

Արտադրական պրակտիկաները ֆակուլտետի տարբեր բաժիններն անցկացնում են տարբեր հիմնարկներում: Օրինակ

«Սերվիսի» ուսանողներն այն անցկացնում են հյուրանոցներում, տուրգործակալություններում, թանգարաններում իսկ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության ուսանողները չափագրման և կադաստրի հիմնարկներում:

Հաշվետու տարում կարևորվել է նաև ուսանողների առաջադիմությունը: Ֆակուլտետի ուսանողների առաջադիմության պատկերը ներկայացվում է ստորև:

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի ուսանողների առաջադիմության դինամիկան 2022-20233 ուստարի :

«ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ»							
Կուրս	Ուսանողների թիվը	Տարեկան ՄՈԳ				ՄՈԳ-ը բարձրացրած	ՄՈԳ-ը իջեցրած
		40-70	71-85	86-90	91-100		
II	7	1	-	4	2	4	3
III	2	-	-	2	-	-	2
IV	6	3	-	-	3	-	6
Ընդամենը	15	4	-	6	5	4	11
«ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»							
II	**6**		**2**	**1**	**3**	**6**	
III	**10**	**1**	**1**	**3**	**5**	**9**	**1**
IV	**2**		**1**		**1**		**2**
Ընդամենը	**18**	**1**	**4**	**4**	**9**	**15**	**3**
«ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ							
II	**6**	**1**		**2**	**3**	**6**	
«ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ							
II	**1**				**1**	**1**	

Կարևոր ենք համարում նաև ուսումնական խորհրդատուների /կուրսղեկների/ աշխատանքը: Ցանկալի է այն իրատեսական դարձնել և էլ ավելի ակտիվացնել նրանց գործունեությունը, որոնք բացի անձնական խորհրդատվությունից կոչված են իրենց վստահված կուրսերում վեր հանել առաջադիմությանը առնչվող խնդիրներ և առաջարկել դրանց լուծման ուղիներ: Որպես աշխատանքային պլան անհրաժեշտ է ներկայացնել կուրսերի հետ կազմակերպվող արտալսարանային միջոցառումների ժամանակացույցը:

Կարևոր գործընթաց է նաև ֆակուլտետի ամբիոններում իրականացվող կուրսային աշխատանքները: Դրանք ընդհանուր առմամբ կատարվել են ըստ սահմանված կարգի բայց նկատվել են նաև որոշակի թերություններ: Աշխատանքների զգալի մասում չկա հետևողականություն հղումներում, որ այնքան կարևոր է ակադեմիական ազնվությունը ապահովելու համար:

Լուծման ուղիներից մեկը ղեկավարների կողմից առավել մեծ սկզբունքայնություն ցուցաբերելն է՝ հաճախակի հանդիպում-քննարկումների կազմակերպում ուսանողի հետ:

Կուրսային աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները առավելապես դժվարանում և թերանում են նյութի տրամաբանության շարադրանքի հարցում: Շատ են նաև տեխնիկական վրիպումները, որոնք վերաբերում են հղումներին, գրականության ցանկին:

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի ուսանողների առաջադիմությունն ըստ գնահատականների: 2022-2023 ուստարի

«ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՌԿԱ					
	I կուրս	II կուրս	III կուրս	VI կուրս	Ընդամենը
Ուսանողների թիվը	-	7	2	6	15
Բավարար	-	14,3%	-	50%	26,7%
Լավ	-	-	-	-	-
Գերազանց	-	85,7%	100%	50%	73,3%
«ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»					
Ուսանողների թիվը	-	7	6	10	23
Բավարար	-	42,9%	-	10%	17,4%
Լավ	-	57,1%	-	20%	26,0%
Գերազանց	-	-	100%	70%	56,6%
«ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ					
Ուսանողների թիվը		6	-	-	-
Բավարար		16,7%	-	-	-
Լավ		-	-	-	-
Գերազանց		83,3%	-	-	-

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի ուսանողների առաջադիմության դինամիկան: 2022-2023 ուստարի **:**

«ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»							
Կուրս	Ուսանողների թիվը	Տարեկան ՄՈԳ				ՄՈԳ-ը բարձրացրած	ՄՈԳ-ը իջեցրած
		40-70	71-85	86-90	91-100		
II	-	-	-	-	-	-	-
III	2	1	-	-	1	2	-
IV	2	-	1	1	-	-	2
ԸՆԴԱՄԵՆԸ	**4**	**1**	**1**	**1**	**1**	**2**	**2**
«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»							
I	6	2	2	-	-	2	2
II	8	2	2	1	2	7	-
III	5	4	-	-	1	3	2
IV	1	-	-	-	1	1	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**20**	**8**	**4**	**1**	**4**	**13**	**4**
«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»							
I	5	1	4	-	-	-	5
II	7	4	2	-	1	6	1
III	6	2	3	1	-	2	4
IV	6	-	4	1	1	2	4
ԸՆԴԱՄԵՆԸ	**24**	**7**	**13**	**2**	**2**	**10**	**14**

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի ուսանողների առաջադիմության դինամիկան:2022-2023 ուստարի

«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» ՀԵՌԱԿԱ							
Կուրս	Ուսանողների թիվը	Տարեկան ՄՈԳ				ՄՈԳ-ը բարձրացրած	ՄՈԳ-ը իջեցրած
		40-70	71-85	86-90	91-100		
I	3	2	-	-	-	-	2
II	15	7	4	1	-	5	7
III	4	4	-	-	-	-	4
IV	10	7	-	1	-	8	-
V	3	1	2	-	-	2	1
ԸՆԴԱՄԵՆԸ	**35**	**21**	**6**	**2**	**-**	**15**	**14**
«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ՀԵՌԱԿԱ							
I	-	-	-	-	-	-	-
II	-	-	-	-	-	-	-
III	-	-	-	-	-	-	-
IV	2	1	-	1	-	1	1
V	4	2	2	-	-	2	2
ԸՆԴԱՄԵՆԸ	**6**	**3**	**2**	**1**	**-**	**3**	**3**
«ՖԻԶԻԿԱ» ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ							
I	3	-	-	1	-	1	-
II	-	-	-	-	-	-	-
«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ							
I	-	-	-	-	-	-	-
II	2	-	-	1	-	-	1

Ֆակուլտետի ամբիոններում իրականացվող կարևորագույն աշխատանքներից են մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող հետազոտությունները և դրանց պաշտպանությունները: Մագիստրոսական թեզերի ղեկավարումն իրականացվել է ամբիոնների պրոֆեսորադասախոսական ներուժի միջոցով: Թեզերը հիմնականում ղեկավարել են գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները: Վերլուծությունները ցույց են տալիս, որ մագիստրոսական թեմաները հիմնականում համապատասխանում են դասախոսների գիտական հետաքրքրությունների ոլորտին: Սակայն որոշ թեմաների

ուղղությամբ համագործակցությունն այլ բուհերի կամ գիտահետազոտական ինստիտուտների հետ անհրաժեշտություն է: Նման համագործակցություն ունի «Կենսաբանության և քիմիայի» ամբիոնը: Հետագայում ավելի արդյունավետ գործունեություն ծավալելու նպատակով անհրաժեշտ է համագործակցության պայմանագրեր կնքել համապատասխան կազմակերպությունների հետ:

Մագիստրոսական թեզերի պաշպանությունը անցել է բնականոն հունով: Առաջադիմությունը բարձր է եղել՝ լավ և գերազանց գնահատականներով: Բոլոր ուսանողները հաջողությամբ հանձնել են իրենց որակավորման քննությունները: 7 մագիստրոսներից 3-ը ստացել են A, 2-ը՝ A-, 1-ը՝ B և 1-ը՝ C:

Սակայն պետք է նշել, որ մագիստրոսական թեզերի իրականացման ժամանակ դիտվել են թերացումներ: Մագիստրատուրայի ուսանողները դժվարացել են հետազոտական մեթոդների ընտրության և լուսաբանման հարցում, ինչպես նաև թերություններ են նկատվել ավարտական աշխատանքների և թեզերի եզրահանգումներում:

Նախագահների հաշվետություն

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների ընդհանուր տպավորությունը գոհացուցիչ է, սակայն եղել են նաև առաջարկություններ ապագա մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ: Մասնավորապես նախագահ ա.գ.թ. դոցենտ Վ. Գրիգորյանը առաջարկում էր ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների ներկայացմանը, տեխնիկական ու մասնագիտական որակների բարձրացմանը, ինչպես նաև թեզերի վերնագրերի ընտրությանը:

Ստորև ներկայացվում է ուսումնական գործընթացն ըստ առանձին ամբիոնների:

Հաշվետու ուսումնական տարում «Կենսաբանության և քիմիայի » ամբիոնի կողմից թողարկվել են հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերը.

1.«Կենսաբանություն» բակալավր
2.«Դեղագործական քիմիա» բակալավր
3.«Կենսաբանություն» մագիստրատրատուրա
4.«Կենսատեխնոլոգիա» մագիստրատուրա

Ամբիոնի մասանագիտական կրթական ծրագերի բարելավման նպատակով կատարվել է մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ): Վերջինիս նպատակն է եղել համեմատական վերլուծության միջոցով բարելավել ՇՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակությունը՝ աշխատաշուկայի պահանջներին, ուսանողների

մասնագիտական կարիքներին համահունչ: Կրթական ծրագրերի լավարկման շնորհիվ նպաստել ուսանողների շարժունությանը:

ՇՊՀ «Կենսաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի և ՀՊՄՀ-ի «Կենսաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծության արդյունքում հանգել են հետևյալ եզրակացությանը, որ 1-ին կուրսի ուսումնառության ավարտից հետո՝ նույն կուրսում ուսումնառությունը շարունակելու համար ՇՊՀ-ից ՀՊՄՀ ուսանողի տեղափոխությունը հնարավոր է, քանի որ առարկայական կրեդիտների տարբերությունը 20 է, նույն կուրսում ՀՊՄՀ -ից ՇՊՀ ուսումնառությունը շարունակելու համար ուանողի տեղափոխությունը հնարավոր չէ, քանի որ առարկայական կրեդիտների տարբերությունը 24 է: Սկսած 2-րդ կուրսից՝ նույն կուրսում ուսումնառության շարունակությանը խոչընդոտում է կրեդիտային տարբերության ավելացումը:

ՇՊՀ «Դեղագործական քիմիա» մասնագիտության կրթական ծրագրի և ՎՊՀ «Դեղագործական քիմիա» մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ առաջին կուրսի ուսումնառության ավարտից հետո՝ նույն կուրսում ուսումնառությունը շարունակելու համար ՇՊՀ-ից ՎՊՀ ուսանողի տեղափոխությունը հնարավոր չէ, քանի որ առարկայական կրեդիտների տարբերությունը 38 է: Նույն կուրսում ՎՊՀ -ից ՇՊՀ ուսումնառությունը շարունակելու համար ուսանողի տեղափոխությունը հնարավոր չէ, քանի որ առարկայական կրեդիտների տարբերությունը 24 է:

Սկսած առաջին կուրսից՝ նույն կուրսում ուսումնառության շարունակությանը խոչընդոտում է կրեդիտային տարբերության ավելացումը:

Ամբիոնի մասանագիտական կրթական ծրագերի բարելավման նպատակով կատարվել է մասնագիտական կրթական ծրագրերի swot վերլուծություն: Նշվել են ամբիոնի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավորություններն ու մարտահրավերները: Վերլուծության արդյունքում եկել են հետևյալ եզրակացության:

1. Կտրուկ նվազել է ամբիոնում իրականացվող ՄԿԾ-ների գծով դիմորդների թիվը, որն առաջնահերթ խնդիր է համարվում, որը հիմնականում պայմանավորված է երկու միասնական քննությունների ներդրումով:
2. Ցածր է դիմորդ/ ուսանողների միասնական քննական դասընթացներից իմացության մակարդակը:
3. Անհրաժեշտ է բուհում ներդնել հանրակրթությանը սպասարկող միաժամանակ կենսաբանության և քիմիայի ուսուցչի որակավորում շնորհող «Կենսաբանություն և քիմիա» մասնագիտական կրթական ծրագիր:
4. Ամբիոնում առկա է սերնդափոխության խնդիրը, որը պայմանավորված է հետբուհական կրթության կազմակերպման խնդիրներով, ինչպես նաև աշխատավարձի ոչ գրավիչ լինելու պատճառով:
5. Հեռավոր վայրերից դիմորդների ներգրավման արդյունավետությանը խոչընդոտում է տրանսպորտային անհարմարություններն ու կեցության խնդիրը:
6. ՇՊՀ-ում ցածր է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատավարձը:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման նպատակով ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցել է բուհ-ում իրականացվող վերապատրաստումներին: Վերապատրաստումների արդյունքում լրամշակվել և բարելավվել են մասնագիտական կրթական ծրագրերը, առարկայական նկարագրիչները, թեմատիկ օրացուցային պլանները: Վերանայվել են ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները: Յուրաքանչյուր դասընթացի համար մշակվել են հանձնարարականներ:

Ամբիոնում հաճախակի կազմակերպվել են մեթոդական հանձնաժողովի նիստեր, որի ժամանակ քննարկվել են ՄԿԾ-ների լավարկման վերաբերյալ մի շարք հարցեր:

«Կենսաբանության և քիմիայի» ամբիոնի կողմից թողարկվող 011401.01.6 «Կենսաբանություն», 053101.02.6 «Դեղագործական քիմիա» բակալավրի կրթական ծրագրերի կազմման և բարելավման նպատակով ստեղծվել են մեթոդական հանձնաժողովներ:

Գործատուների հետ հանդիպումների արդյունքում եղել են առաջարկություններ: Գործատու Լ. Պետրոսյանն առաջարկել է «Դեղագործական քիմիա» մասնագիտության գծով ուսումնական պլանով նախատեսված արտադրական պրակտիկաներն արդյունավետ կերպով իրականացնելու համար «Ալֆա ֆարմ» դեղատնային ցանցերի հետ կնքել պայմանագիր, որը թույլ կտա «Դեղերի արտադրության տեխնոլոգիա (դեղատնային)» և «Դեղերի արտադրության տեխնոլոգիա» դասընթացների պրակտիկաները կազմակերպել այդ ցանցի արտադրությունում:

Շրջանավարտ Նաիրա Քոչարյանն առաջարկել է ներդնել «Կենսաբանություն և քիմիա» մասնագիտությունը, որը թույլ կտա շրջանավարտին դպրոցում աշխատելու որպես կենսաբանության և քիմիայի ուսուցիչ: Շրջանավարտն առաջարկել է արդիականացնել ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում դասընթացի ծրագրերը: Գործատու Ս. Համբարձումյանն առաջարկել է ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում դասընթացի շրջանակում ժամաքանակ հատկացնել էլեկտրոնային դասամատյանների լրացման կարգին:

Դասընթացների շրջանակներում իրականացվող ուսումնական պրակտիկաները կազմակերպվում են գիտահետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում (ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Գյումրու սելեկցիոն կայան, Արփիմեդ ՓԲԸ, Լիկվոր ՓԲԸ, Ֆարմատեք ՓԲԸ, Ախուրյանի «Ստանդարտ դիալոգ» լաբորատորիա, Մարգահովիտ գյուղի ուսումնական կենտրոնում): Ուսումնադաշտային պրակտիկաները կազմակերպվում են Ստեփանավանում /Դենդրոպարկ/, Դիլիջանում /Ազգային պարկ/, Իջևանում/Դենդրոպարկ/, «Արփի լիճ» ազգային պարկում, Երևանի բուսաբանական այգում:

Հաշվետու ուսումնական տարում «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ » ամբիոնի կողմից թողարկվել են հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերը.

1. Մաթեմատիկա, բակալավր

2. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, բակալավր
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ, բակալավր
4. Ինֆորմատիկա, բակալավր
5. Մաթեմատիկա, մագիստրատուրա
6. Ֆիզիկա, մագիստրատուրա
7. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, մագիստրատուրա

Հետբուհական կրթական աստիճան (ասպիրանտուրա, հայցորդություն)

- Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ բնագավառի մասնագիտություններ (Ա.00.00)
- Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա) (ԺԳ.00.02)

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածության 72%-ը լսարանային ժամաքանակն է, իսկ 28%-ը՝ արտալսարանային: Արտալսարանային ծանրաբեռնվածության մեջ մտնում են մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների, պրակտիկաների ղեկավարումը, հեռակա բաժնի ուսանողների անհատական խորհրդատվությունները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, հարցատոմսերի կազմումը, քննությունների անցկացումը և ստուգումը:

Նշենք, որ հաշվետու ուստարում ամբիոնի ՊԴ կազմի կողմից ըստ կարգի ղեկավարվել են յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ատենախոսական աշխատանքները:

Նշենք, որ 2022-2023 ուստարում ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է նաև 2021-2022 ուստարում ատեստավորմանը չմասնակցաց թվով 1 ուսանող՝ մագիստրատուրա կրթական ծրագրի Մաթեմատիկա մասնագիտության ուսանողուհի Ս. Խոցանյանը:

Պայմանավորված ՇՊՀ Զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) Խնդիր 1-ի՝ «Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրեր»-ի «Լավարկված կրթական ծրագրեր» կատարողականի ցուցիչի ապահովմամբ, կրթական ծրագրերի (ԿԾ) մշտադիտարկմամբ, մատուցվող ԿԾ-ների շարունակական բարելավմամբ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմամբ 2022-2023 ուստարում համալսարանում, մասնավորապես ամբիոնում, մեկնարկել են բակալավրի կրթական ծրագրի բարելավման գործընթացը: ՇՊՀ ՌԾ-ին, Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցին համահունչ իրականացվում են ԿԾ-ների բարելավման գործընթացներ, որոնց շրջանակում:

Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից ամբիոն է տրվել աշխատանքային և բազային ուսումնական պլանների նոր տարբերակներ՝ արդեն վերանայված Ընդհանուր հումանիտար և հասարակագիտական, Բնագիտական, Ընդհանուր մասնագիտական, Կամընտրական և Հետազոտական կրթամասերով:

Անցկացվել է բենչմարքինգ նույն ԿԾ-ն իրականացնող Վանաձորի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի համապատասխան ԿԾ-ի հետ: Իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ ամբիոնի ՊԴ կազմի հետ, ԿԾ-ի բարելավման նպատակով ձևավորված հանձնախմբի հետ, որտեղ ներգրավված են ուսանողներ, շրջանավարտներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ: Կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ:

Իրականացված քայլերի արդյունքում հաստատման է ներկայացվել ուսումնական պլանների աշխատանքային և բազային նոր, լավարկված տարբերակները: Մեկնարկել են նաև նոր ուսումնական պլաններին համապատասխան մասնագրերի, նոր ձևաչափերով առարկայական նկարագրիչների և թեմատիկ օրացուցային պլանների բարելավման գործընթացը՝ ՈՈՇ-ին համահունչ վերջնարդյունքների և յուրաքանչյուր վերջնարդյունքի ստուգման համար հանձնարարականների պատրաստմամբ:

Գործընթացի ավարտին ակնկալվում է ունենալ լավարկված ԿԾ, ԿԾ-ում կամընտրական և հետազոտական բաղադրիչների առկայություն, գործատուների և ուսանողների՝ ստացած կրթությունից բավարարվածության մակարդակի բարձրացում, ԿԾ-ի մրցակցության բարձրացում:

Հաշվետու ուսումնական տարում «Տնտեսագիտության » ամբիոնի կողմից թողարկվել են հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերը.

1. «Կառավարում /ըստ ոլորտի/» բակալավր
2. «Հաշվապահական հաշվառում և հարկում/ըստ ոլորտի/» բակալավր
3. «Շուկայագիտություն (մարքեթինգ /ըստ ոլորտի)» բակալավր
4. «Կառավարում /ըստ ոլորտի/» մագիստրատուրա

Ամբիոնի մասանագիտական կրթական ծրագերի բարելավման նպատակով կատարվել է բենչմարքինգ:

Բենչմարքինգի իրականացման նպատակն է եղել.

- Լավագույն փորձի ուսումնասիրությամբ բարելավել ՇՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակությունը՝ աշխատաշուկայի պահանջներին, ուսանողների մասնագիտական կարիքներին համահունչ:

- Կրթական ծրագրերի լավարկման շնորհիվ նպաստել ուսանողների շարժունությանը:

ՇՊՀ «Կառավարում /ըստ ոլորտի/» մասնագիտության կրթական ծրագրի և ԵՊՀ-ի ու Հայ-ռուսական համալսարանի ԿԾ-երի մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծության արդյունքում հանգել են հետևյալ եզրակացության.

Չնայած մասնագիտական դասընթացների քանակով տարբերությունը բուհերի միջև մեծ չէ, այդուհանդերձ ՀՊՄՀ-ի և ԵՊՀ ԿԾ-երի համեմատությամբ տարբերությունը բավականին քիչ է և չի կարող խոչընդոտել ՀՀ-ում ուսանողների շարժունությանը, նույն մասնագիտության գծով բուհից բուհ տեղափոխությանը, որի դեպքում տարբերությունները օրենքով սահմանված են առավելագույնը 20 կրեդիտ (5-8%) (տես՝ Բուհերում սովորողների ակադեմիական շարժունության կարգը, մաս III, կետ 11): Միևնույն ժամանակ առկա դասընթացների բովանդակությունը տարբեր բուհերում շատ մոտ է, ինչը կարող է հնարավորություն տալ շարժունության համար:

Առաջարկվում է բազմազանեցնել ՄԿԾ-ի դասավանդման և ուսումնառության և վերջնարդյունքների գնահատման մեթոդները՝ նկատի ունենալով առաջավոր փորձը:

ՇՊՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» մասնագիտության կրթական ծրագրի և ՀՊՏՀ-ի ու Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանի մասնագիտության կրթական ծրագրերի համեմատական վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացության.

Համեմատական վերլուծության արդյունքում առանձնացնում ենք հետևյալ դիտարկումները.

Չնայած մասնագիտական դասընթացների քանակով տարբերությունը բուհերի միջև մեծ չէ, այդուհանդերձ ՀՊՏՀ-ի և Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարան ԿԾ-երի համեմատությամբ տարբերությունը բավականին քիչ է և չի կարող խոչընդոտել ՀՀ-ում ուսանողների շարժունությանը, նույն մասնագիտության գծով բուհից բուհ տեղափոխությանը, որի դեպքում տարբերությունները օրենքով սահմանված են առավելագույնը 20 կրեդիտ (5-8%) (տես՝ Բուհերում սովորողների ակադեմիական շարժունության կարգը, մաս III, կետ 11): Միևնույն ժամանակ առկա դասընթացների բովանդակությունը տարբեր բուհերում շատ մոտ է, ինչը կարող է հնարավորություն տալ շարժունության համար:

Առաջարկվում է բազմազանեցնել ՄԿԾ-ի դասավանդման և ուսումնառության և վերջնարդյունքների գնահատման մեթոդները՝ նկատի ունենալով առաջավոր փորձը:

Հանդիպում և քննարկում է կազմակերպվել նաև ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ Ն.Ավետիսյանի, գործատուների, ուսանողների, շրջանավարտների, ՄԿԾ-ների պատասխանատուների հետ, որի ընթացքում ներկայացվել է «Կառավարում/ըստ ոլորտի» ՄԿԾ-ում կատարված փոփոխությունները: Մասնակիցների կողմից ներկայացվել են առաջարկներ և դիտարկումներ: Արդյունքում ներկայցվել են ՄԿԾ-ի փոփոխման հետևյալ հիմնավորումները՝

1. **Բարելավման անհրաժեշտությունը՝** հաշվի առնելով ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության զեկույցը, Կառավարում որակավորումների ոլորտային շրջանակի բնութագիրը, ինչպես նաև ՇՊՀ-ի ռազմավարությունը, անհրաժեշտություն է առաջացել լավարկել կրթական ծրագրերը

2. Ընթացիկ իրավիճակը-իրականացվել է benchmarking՝ Կառավարում /ըստ ոլորտի/ կրթական ծրագիր - ԵՊՀ, Հայ-ռուսական համալսարան կրթական ծրագրերի ուսումնասիրության միջոցով

Համեմատական վերլուծության արդյունքում առանձնացնում ենք հետևյալ դիտարկումները.

Չնայած մասնագիտական դասընթացների քանակով տարբերությունը բուհերի միջև մեծ չէ, այդուհանդերձ Հայ-ռուսական համալսարանի և ԵՊՀ ԿԾ-երի համեմատությամբ տարբերությունը բավականին քիչ է և չի կարող խոչընդոտել ՀՀ-ում ուսանողների շարժունությանը, նույն մասնագիտության գծով բուհից բուհ տեղափոխությանը, որի դեպքում տարբերությունները օրենքով սահմանված են առավելագույնը 20 կրեդիտ (5-8%) (տես՝ Բուհերում սովորողների ակադեմիական շարժունության կարգը, մաս III, կետ 11): Միևնույն ժամանակ առկա դասընթացների բովանդակությունը տարբեր բուհերում շատ մոտ է, ինչը կարող է հնարավորություն տալ շարժունության համար:

Առաջարկվում է բազմազանեցնել ՄԿԾ-ի դասավանդման և ուսումնառության և վերջնարդյունքների գնահատման մեթոդները՝ նկատի ունենալով առաջավոր փորձը:

3. Ակնկալվող արդյունքը՝ կատարված փոփոխությունները կնպաստեն որպեսզի կրթական ծրագիրը համապատասխանի ոչ միայն ՇՊՀ-ի ռազմավարական ծրագրին, այլ նաև աշխատաշուկայի պահանջներին, քանի որ հաշվի է առնվել շահակիցների կարծիքները՝ մասնավորապես գործատուի, ուսանողների, շրջանավարտների:

4. Կապը ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի հետ, ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագրի հետ

Հաշվի առնելով ՇՊՀ-ի ՌԾ-ի առաքվելությունը և տեսլականը, ըստ որի ՇՊՀ-ի գործունեությունը միտված է ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ կրթական ծրագրերի և գիտական հետազոտությունների իրականացման միջոցով որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստմանը, ինչպես նաև Տնտեսագիտության ՌԾ-ի առաքելությունը, ըստ որը միտված է ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումանը: Կատարվել են վերոնշյալ փոփոխությունները:

Հանդիպում և քննարկում է կազմակերպվել նաև ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ Ն.Ավետիսյանի, գործատուների, ուսանողների, շրջանավարտների, ՄԿԾ-ների պատասխանատուների հետ, որի ընթացքում ներկայացվել է «Հաշվապահական հաշվառում և հարկում/ըստ ոլորտի» ՄԿԾ-ում կատարված փոփոխությունները: Մասնակիցների կողմից ներկայացվել են առաջարկներ և դիտարկումներ: Արդյունքում ներկայցվել են ՄԿԾ-ի փոփոխման հետևյալ հիմնավորումները՝

1. **Բարելավման անհրաժեշտությունը՝** հաշվի առնելով ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության զեկույցը, ինչպես նաև ՇՊՀ-ի ռազմավարությունը, անհրաժեշտություն է առաջացել լավարկել կրթական ծրագրերը

2. **Ընթացիկ իրավիճակը (իրականացվել է** benchmarking՝ Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի) – ՀՊՏՀ, Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարան կրթական ծրագրերի ուսումնասիրության միջոցով

Համեմատական վերլուծության արդյունքում առանձնացնում ենք հետևյալ դիտարկումները.

Չնայած մասնագիտական դասընթացների քանակով տարբերությունը բուհերի միջև մեծ չէ, այդուհանդերձ ՀՊՏՀ-ի և Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարան ԿԾ-երի համեմատությամբ տարբերությունը բավականին քիչ է և չի կարող խոչընդոտել ՀՀ-ում ուսանողների շարժունությանը, նույն մասնագիտության գծով բուհից բուհ տեղափոխությանը, որի դեպքում տարբերությունները օրենքով սահմանված են առավելագույնը 20 կրեդիտ (5-8%) (տես՝ Բուհերում սովորողների ակադեմիական շարժունության կարգը, մաս III, կետ 11): Միևնույն ժամանակ առկա դասընթացների բովանդակությունը տարբեր բուհերում շատ մոտ է, ինչը կարող է հնարավորություն տալ շարժունության համար:

Առաջարկվում է բազմազանեցնել ՄԿԾ-ի դասավանդման և ուսումնառության և վերջնարդյունքների գնահատման մեթոդները՝ նկատի ունենալով առաջավոր փորձը:

3. **Ակնկալվող արդյունքը՝** կատարված փոփոխությունները կնպաստեն որպեսզի կրթական ծրագիրը համապատասխանի ոչ միայն ՇՊՀ-ի ռազմավարական ծրագրին, այլ նաև աշխատաշուկայի պահանջներին, քանի որ հաշվի է առնվել շահակիցների կարծիքները՝ մասնավորապես գործատուի, ուսանողների, շրջանավարտների:

4. **Կապը ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի հետ, ամբիոնի զարգացման ռազմավարական ծրագրի հետ**

Հաշվի առնելով ՇՊՀ-ի ՌԾ-ի առաքվելությունը և տեսլականը, ըստ որի ՇՊՀ-ի գործունեությունը միտված է ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ կրթական ծրագրերի և գիտական հետազոտությունների իրականացման միջոցով որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստմանը, ինչպես նաև Տնտեսագիտության ՌԾ-ի առաքելությունը, ըստ որը միտված է ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումանը: Կատարվել են վերոնշյալ փոփոխությունները:

Մասանագիտական կրթական ծրագերի բարելավման նպատակով ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցել է բուհ-ում իրականացվող վերապատրաստումներին: Վերապատրաստումների արդյունքում լրամշակվել և բարելավվել են մասանագիտական կրթական ծրագերի մասնագրերը, առարկայական նկարագրիչները, թեմատիկ օրացուցային պլանները: Վերանայվել են ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները: Յուրաքանչյուր դասընթացի համար մշակվել են հանձնարարականներ:

Ամբիոնում հաճախակի կազմակերպվել են մեթոդական հանձնաժողովի նիստեր, որի ժամանակ քննարկվել են ՄԿԾ-ների լավարկման վերաբերյալ մի շարք հարցեր:

Հաշվետու ուսումնական տարում «Աշխարհագրություն և սերվիս» ամբիոնի կողմից թողարկվել են հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերը.

1. «Աշխարհագրություն», բակալավր
2. «Սերվիս», բակալավր
3. «Քարտեզագրություն և կադաստրային գործ», բակալավր
4. «Աշխարհագրություն», մագիստրատուրա
5. «Կայուն զբոսաշրջություն», մագիստրատուրա

Հետբուհական կրթական աստիճան (ասպիրանտուրա, հայցորդություն)

6. Գիտություններ երկրի մասին, «Աշխարհագրություն» (ԺԱ.00.01)

«Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնը վերակազմավորվել է 2022 թ. օգոստոսի 15-ին ՇՊՀ-ում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, որի աշխատանքները 2022-2023 ուստարում միտված են եղել ուսումնական ու գիտական գործունեության իրականացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում վերը նշված մասնագիտություններով ուսումնառությունը իրականացվել է ուսումնական պլաններով և համապատասխան առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր դասախոսությունները, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքները, կատարվել են ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքներ՝ ըստ դասախոսների անհատական աշխատանքային պլաններում նշված ժամանակացույցի:

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածության 68%-ը լսարանային ժամաքանակն է, իսկ 32%-ը՝ արտալսարանային: Արտալսարանային ծանրաբեռնվածության մեջ մտնում են մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների, պրակտիկաների ղեկավարումը, հեռակա բաժնի ուսանողների անհատական խորհրդատվությունները, միջանկյալ և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, հարցատոմսերի կազմումը, քննությունների անցկացումը և ստուգումը:

Նշենք, որ հաշվետու ուստարում ամբիոնի ՊԴ կազմի կողմից ըստ կարգի ղեկավարվել են յուրաքանչյուրի ծանրաբեռնվածությամբ նախատեսված կուրսային և ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, ատենախոսական աշխատանքները:

Պայմանավորված ՇՊՀ Զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) Խնդիր 1-ի՝ «Բարձրորակ և մրցունակ կրթական ծրագրեր»-ի «Լավարկված կրթական ծրագրեր» կատարողականի ցուցիչի ապահովմամբ, կրթական ծրագրերի (ԿԾ)

մշտադիտարկմամբ, մատուցվող ԿԾ-ների շարունակական բարելավմամբ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարձրորակ մասնագետների պատրաստմամբ 2022-2023 ուստարում համալսարանում, մասնավորապես ամբիոնում, մեկնարկել են բակալավրի կրթական ծրագրի բարելավման գործընթացը: ՇՊՀ ՌԾ-ին, Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցին համահունչ իրականացվում են ԿԾ-ների բարելավման գործընթացներ, որոնց շրջանակում:

Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից ամբիոն է տրվել աշխատանքային և բազային ուսումնական պլանների նոր տարբերակներ՝ արդեն վերանայված Ընդհանուր հումանիտար և հասարակագիտական, Բնագիտական, Ընդհանուր մասնագիտական, Կամընտրական և Հետազոտական կրթամասերով:

Անցկացվել է բենչմարքինգ նույն ԿԾ-ն իրականացնող Վանաձորի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի համապատասխան ԿԾ-ի հետ: Իրականացվել են հանդիպումներ և քննարկումներ ամբիոնի ՊԴ կազմի հետ, ԿԾ-ի բարելավման նպատակով ձևավորված հանձնախմբի հետ, որտեղ ներգրավված են ուսանողներ, շրջանավարտներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ: Կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ:

2022-23 ուստարում «Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնում սովորող 158 ուսանողների առաջադիմության արդյունքները ցույց են տալիս, որ նախորդ տարվա համեմատությամբ սովորողների 34,9%-ը բարձրացրել է ՄՈԳ-ը, իսկ 65,1%-ը՝ իջեցրել: Ընդհանուր առմամբ արդյունքները գոհացուցիչ են, սակայն «Սերվիսի» և «Քարտեզագրություն և կադաստրային գործ» բաժնի բակալավր հեռակայի ուսանողների մոտ նկատվում է ՄՈԳ-ի իջեցում, ինչը կապում ենք հեռակա սովորելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու հետ:

Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի ուսանողների առաջադիմության դինամիկան
2022-2023 ուստարի

Կուրսային աշխատանքներ		
Մասնագիտություն / Կուրս	Ուսանողի թիվ	Միջին գնահատական
Աշխարհագրություն / 3-րդ կուրս առկա	4	94,5
Աշխարհագրություն / 4-րդ կուրս առկա	3	88,0
Աշխարհագրություն / 5-րդ կուրս հեռակա	2	60,5
Քարտեզագրություն /3-րդ կուրս առկա	9	74,0
Քարտեզագրություն /4-րդ կուրս առկա	6	73,7
Քարտեզագրություն /4-րդ կուրս հեռակա	2	80,0
Քարտեզագրություն /5-րդ կուրս հեռակա	5	62,4
Սերվիս /3-րդ կուրս առկա	7	94,9
Զբոսաշրջություն /3-րդ կուրս առկա	2	65,0
Ավարտական աշխատանքներ		
Աշխարհագրություն / 4-րդ կուրս առկա	3	83,0
Աշխարհագրություն / 5-րդ կուրս հեռակա	2	80,0
Քարտեզագրություն /4-րդ կուրս առկա	6	85,0
Քարտեզագրություն /5-րդ կուրս հեռակա	5	68,0
Սերվիս /5-րդ կուրս հեռակա	3	72,0
Մագիստրոսական թեզեր		
Կայուն զբոսաշրջություն /2-րդ կուրս/	13	92

«Աշխարհագրություն և սերվիս» ամբիոնի ուսանողների առաջադիմության դինամիկան:
2022-2023 ուստարի

«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» բակալավր, առկա							
Կուրս	Ուսանողների թիվը	Տարեկան ՄՈԳ				ՄՈԳ-ը բարձրացրած	ՄՈԳ-ը իջեցրած
		40-70	71-85	86-90	91-100		
II	6		3	2	1	6	
III	7	4		1	2	6	1
Ընդամենը	13	4	3	3	3	12	1
«ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾ » բակալավր, առկա							
II	6		2	1	3	6	
III	10	1	1	3	5	9	1
IV	2		1		1		2
Ընդամենը	18	1	4	4	9	15	3
«ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» մագիստրատուրա							
I	7						
II	13		1	1	3	3	2
«ՍԵՐՎԻՍ» բակալավր, առկա							
II	19	2	11	2	4	2	17
III	12	1	2	2	7	11	1
IV	7	1		2	4	4	3
Ընդամենը	38	4	13	6	15	17	21

«Աշխարհագրություն և սերվիս» ամբիոնի ուսանողների առաջադիմությունն ըստ գնահատականների 2022-2023 ուստարի:

«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» բակալավր, առկա					
	I կուրս	II կուրս	III կուրս	VI կուրս	Ընդամենը
Ուսանողների թիվը	-	6	7	-	13
Բավարար	-	-	57,1%	-	30,8%
Լավ	-	83,3%	14,3%	-	46,1%
Գերազանց	-	16,7%	28,6%	-	23,1%
«ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾ» բակալավր, առկա					
Ուսանողների թիվը	-	6	10	2	18
Բավարար	-	-	10%	-	5,5%
Լավ	-	50 %	40%	50%	44,4%
Գերազանց	-	50%	50%	50%	50%
«ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ» մագիստրատուրա					
Ուսանողների թիվը	-	5	-	-	-
Բավարար	-	-	-	-	-
Լավ	-	40%	-	-	-
Գերազանց	-	60%	-	-	-

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հաշվետու ուսումնական տարում Շիրակի պետական համալսարանի Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում իրականացվել է զգալի գիտահետազոտական աշխատանք: Դրանք կատարվել են ինչպես ամբիոնների գիտական ուղղությունների շրջանակներում, այնպես էլ ներբուհական դրամաշնորհների և Գիտության պետական կոմիտեի ֆինասավորմամբ:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ամբիոններում իրականացված գիտահետազոտական գործունեության արդյունքում հրատարակված աշխատանքները: 2022-2023 ուստարի:

Ամբիոնը	Դասախոսների թիվը	Հոդված	Մենագրություն	Թեզիս	Միջազգային վարկանիշավորում ունեցող ամսագրեր	Հոդվածներ չհրատարակած դասախոսների թիվը	Արդյունավետության գործակից
Աշխարհագրության և սերվիսի	14	23	2	-	-	5	1,8
Կենսաբանության և քիմիայի	22	10	-	-	-	12	0,4
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ	28	46	-	1	9	16	1,7
Տնտեսագիտության	19	2	-	-	-	17	0,1
Ընդամենը	**83**	**81**	**2**	**1**	**9**	**50**	**0,99**

Այս առումով, ինչպես ֆակուլտետում, այնպես էլ համալսարանում առաջատարը «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնն է, որը գերազանցում է մյուս ամբիոններին, ոչ միայն հրատարակված աշխատությունների բացարձակ թվով, այլև Միջազգային վարկանիշավորում ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների քանակով:

Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դասախոսների արդյունավետության ցուցանիշը մեծ է նաև «Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնում, որտեղ այս ցուցանիշը 1-ից մեծ է (1,8):

Ներկայացված տվյալներից փաստում ենք, որ Scopus շտեմարանում, Web of Science հարթակում ընդգրկված կամ միջազգային վարկանիշավորում ունեցող ամսագրերում հոդվածների քանակը 9 է, ինչը բավական բարձր ցուցանիշ է:

Չնայած այդ հանգամանքին՝ օտարերկրյա գործընկերների հետ համատեղ տպագրված աշխատանքները քիչ են, մասնավորապես, 2022թ. հոդվածների թիվը 1 է՝ դոցենտ Ա. Սարգսյանի՝ օտարերկրյա գործընկերների հետ համահեղինակությամբ հոդվածը ՇՊՀ Գիտական տեղեկագրում:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ կան նաև խնդիրներ: Գիտական աշխատանքները հիմնականում տպագրվում են նույն անձանց կողմից: Այս խնդրին լուծում տալու, և, առհասարակ, գիտական գործունեությամբ զբաղվելու համար համալսարանի աշխատակիցներին խթանելու նպատակով դեռ 2012թ.-ին մշակվել և ներդրվել է աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը, որից ելնելով, ըստ ընթացակարգում սահմանված վարկանիշային սանդղակի, աշխատակիցների կողմից հրատարակված աշխատանքների դիմաց համալսարանը հատկացնում է սահմանված որոշակի գումար՝ լրավճար:

Հարկ ենք համարում նշել, որ ամբիոնի ՊԴ կազմի ներկայացուցիչները միշտ ակտիվորեն ընդգրկված են եղել նաև ՀՀ Գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհներում: Այս տեսանկյունից ամբիոնը միակն է համալսարանում, որի աշխատակիցները իրականացնում են ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմաներ:

Նշենք նաև, որ Գիտության կոմիտեի կողմից ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի արդյունքներով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Սարգսյանը մշտապես ընդգրկվել է առավել բարձր արդյունավետությամբ աշխատող մինչև 100 գիտաշխատողների ցուցակում:

Զգալի գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվել Աշխարհագրության և սերվիսի ամբիոնում, որտեղ ձևավորվել են գիտահետազոտական աշխատանքների մի քանի ուղղություններ: Այս առումով առանձնանում է ամբիոնի դոցենտ Լ.Մ. Մարտիրոսյանի ղեկավարած գիտահետազոտական խումբը, որի կազմի մեջ են. պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Մ. Աբրահամյանը, երկրաբ. գիտ. թեկնածու Ռ.Ս. Սարգսյանը, դասախոս Ք.Հ. Հարությունյանը: Նշված խմբի գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունը ռեկրեացիոն ռեսուրսների գնահատումն է զբոսաշրջության զարգացման նպատակով: Գիտահետազոտական այս ուղղությունը ներկայումս շատ կարևորվում է, քանի որ զբոսաշրջությունը և ռեկրեացիան հանդիսանում են Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: Վերջին հինգ տարիների ընթացքում խմբի կողմից հրատարակվել է 1 գիտական մենագրություն (**«Շիրակի մարզի զբոսաշրջային ռեսուրսները», «ՎԱՌՄ» հրատ. Ե., 2022թ., 322 էջ**), ինչպես նաև 7 գիտական հոդվածներ նվիրված Շիրակի և Արագածոտնի մարզերի զբոսաշրջային ռեսուրսներին: Ներկայումս Լ.Մ. Մարտիրոսյանի ղեկավարած գիտահետազոտական խումբը իրականացնում է ներբուհական դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է գնահատել ՀՀ Արագածոտնի մարզի զբոսաշրջային ռեսուրսները: Այս ծրագրի արդյունքում հրատարակվելու է գիտական մենագրություն:

Նշված բոլոր գիտահետազոտական աշխատանքերում ներգրավված են եղել նաև 4 ուսանողներ, ինչը նպաստում է ամբիոնի ուսանողների գիտական հետազոտություն կատարելու հմտության աճին:

Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված աշխատանների մեջ են մտնում 2 մենագրություններ: 9 հոդվածներ տպագրվել են ՇՊՀ գիտական տեղեկագրում, 6 հոդվածներ ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված ամսագրերում: Ամբիոնի դասախոսների կողմից 4 հոդված է տպագրվել միջազգային գիտաժողովի ժողովածուի մեջ:

Գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում նաև «Կենսաբանության և քիմիայի» ամբիոնում: Ամբիոնի դասախոսական կազմի կողմից (Ադամյան Ն., Գրիգորյան Ա., Պետրոսյան Կ., Ալեքսանյան Ս., Ալեքսանյան Ա., Օքսուզյան Գ.) ԲՈԿ-ի կողմից հաստատված պարբերականներում հրատարակել են ՄԿ ծրագրային թեմաների վերաբերյալ գիտական, գիտամեթոդական աշխատանքներ:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են տարբեր գիտաժողովների և սեմինարների: (Ն. Ադամյան- Հ. Թումանյանի անվան թանգարան Հեքիաթագիտության գիտաժողով ՝ 2020, Գորիսի պետական համալսարանի գիտական նստաշրջան՝ 2022թ, ՀՌՀ գիտական նստաշրջան՝ 2022թ., Գավառի պետական համալսարանի նստաշրջան՝ 2023թ.): Ա. Գրիգորյանը, Գ. Օքսուզյանը, Կ. Պետրոսյանը մասնակցել են ՀՀ տարբեր բուհերի կազմակերպած Հանրապետական և միջազգային գիտաժողովներին: Ամբիոնում գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում նաև **Abionet** ծրագրով եվրոպական համալսարանների հետ (Հունաստան, Իսպանիա, Գերմանիա):

Կարևորվում է ամբիոնի դասախոսների կողմից գրախոսվող ամսագրերում հրապարակումներին հնարավոր մասնակցության ապահովումը:

Որպես առաջատար կազմակերպություն ամբիոնը կարծիք է ներկայացրել Մերի Վիկտորի Արզումանյանի թեկնածուական ատենախոսության վերաբերյալ: Թեման՝ «Հայաստանի ցամաքային փափկամարմինների բազմազանությունը» վերաբերյալ, Գ.00.08 «կենսաբանություն, մակաբուծություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար (2023թ):

Պետք է նշել մի կարևոր հանգամանք ևս: Չնայած Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում իրականացված զգալի գիտահետազոտական աշխատանքների, այստեղ նկատվում են մի քանի բացասական երևույթներ: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆակուլտետի դասախոսական կազմի ավելի քան 60 %- ը չի հրատարակել ոչ մի գիտական աշխատանք: Այս ցուցանիշով առավել վատ արդյունք ունի տնտեսագիտության ամբիոնը, որի 19 դասախոսներից գիտական աշխատանքներ են հրատարակել երկուսը (գիտական աշխատանքներ չհրատարակվածների ցուցանիշը՝ 90%): Այս առումով համեմատաբար լավ ցուցանիշ ունի Աշխարհագրության և սերվիսի ամբիոնը, որտեղ գիտական աշխատանքեր չտպագրած դասախոսները հինգն են (36 %): Կենսաբանության և քիմիայի ամբիոնում այս ցուցանիշը կազմում է 54 %, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS ամբիոնում՝ 57%:

Ֆակուլտետում զգալի աշխատանքեր են իրականացվել ապահովելու համար ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում: մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS, ինչպես նաև Աշխարհագրության և սերվիսի ամբիոններում իրականացվող բոլոր դրամաշնորհային ծրագրերում ներգրավված է առնվազն 1 ուսանող:

Ուսանողների կողմից գիտահետազոտական աշխտանքներ են իրականացվել նաև մագիստրոսական թեզերի շրջանակներում: Այս առամով առանձնանում է Կենսաբանության և քիմիայի ամբիոնը, որտեղ նորագույն սարքավորումներով հագեցած կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում կատարվում են գիտափորձեր:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողների կողմից հրատարակված հոդվածները:
2022-2023ուստարի

№	Ամբիոնի անվանումը	Դասախոսների թիվը	Ուսանողների թիվը	Ուսանողների կողմից հրատարակված հոդվածները	հոդված/ուսանող (%)
1	Աշխարհագրության և սերվիսի	13	171	3	1,75
2	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղ. տեխնոլոգիաների	29	93	3	3,20
3	Տնտեսագիտության	19	157	2	1,27
4	Կենսաբանության և քիմիայի	22	74	2	2,70
	Ընդամենը	**83**	**495**	**10**	**2,02**

Այս առումով առավել լավ ցուցանիշ ունի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS ամբիոնը, որտեղ ուսանողների ավելի քան 3%-ը զբաղվել է գիբահետազոտական գործունեությամբ:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հաշվետու ուսումնական տարում Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետը գործունեություն է ծավալել երեք մասնաբաժիններում (Բ-1, Բ-2, և Գ-2) օգտագործելով 27 լսարաններ: Լսարանների այս քանակությունը բավարար չէ դասապրոցեսը մեկ հերթով կազմակերպելու համար (ֆակուլտետի ակադեմիական խմբերի քանակը առկա ուսուցմամբ՝ 46, հեռակա ուսուցմամբ՝ 26): Երկհերթանի դասապրոցեսը առաջացնում է որոշ դժվարություններ երկրորդ հերթի ուսանողների համար:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետում գործել են 5 լաբորատորիաներ, որոնց մեջ առանձնանում է **Abionet** ծրագրով ստեղծված կենսատեխնոլոգիայի լաբորատորին, որը հագեցված է ժամանակակից գույքով և սարքավորումներով, ինչը թույլ է տալիս լաբորատորիայում իրականացնել բազմազան փորձեր և հետազոտություններ:

Ֆակուլտետում վերակահավորվել է քիմիայի լաբորատորիան: Տեղադրվել է քարշող նոր պահարան, օգտագործման մեջ են դրվել նոր փորձանոթներ և սարքավորումներ:

Վերակահավորվել է նաև կենսաբանության լաբորատորիան: Տեղադրվել են լաբորատոր նոր սեղաններ, ինչն ավելի հարմարավետ է դարձրել փորձերի կատարման համար:

Ուսումնական տարվա ընթացքում մեծ աշխատանքներ են տարվել լսարանների վերակահավորման և նոր կահավորման ուղղությամբ: Ստեղծվել են նոր կահավորված երկու լսարաններ, որտեղ տեղադրվել են նոր սերնդի տեսապրոյեկտորներ: Տեսապրոյեկտորներ են տեղադրվել ևս երկու արդեն իսկ կահավորված լսարաններում: Այսպիսով պրոյեկտորներով կահավորված լսարանների թիվը ֆակուլտետում հասել է 7-ի: Ֆակուլտետի համար շատ կարևոր են նաև համակարգչային լսարանները, որտեղ բացի մասնագիտական դասընթացներից անցկացվում են նաև համահամալսարանական դասեր: Հաշվետու տարում էականորեն թարմացվել համակրգչային տեխնիկան: Ներկայումս ֆակուլտետի հաշվեկշռում են համակրգչային 5 լսարաններ, որոնց տեղերի ընդհանուր քանակությունը հասնում է 70-ի:

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՈՒԹՀՄ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման նպատակով բոլոր ամբիոններում կատարվել է մասնագիտական կրթական ծրագրերի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն (swot): Բոլոր վերլուծություններում նշվել են ՄԿԾ-ների և ընդհանուր առմամբ ամբիոնների ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավորություններն ու մարտահրավերները: Կատարված աշխատանքների հիման վրա, մեր կողմից ներկայացվում է ֆակուլտետի swot վերլուծության արդյունքները:

Ուժեղ կողմեր (Strengths)	Թույլ կողմեր (Weaknesses)
▪ ՄԿԾ-ների համապատասխանություն աշխատաշուկային: ▪ Շիրակի մարզում բնագիտական առարկաների ուսուցչի որակավորում տվող միակ ֆակուլտետ: ▪ Վերանայված ՄԿԾ-ների համադրելիություն որակավորումների ազգային շրջանակի հետ և կառուցվածքային ու բովանդակային համապատասխանություն ԵՊՀ ՄԿԾ-ների մեթոդական ուղենիշներին: ▪ Մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուի ինստիտուտի ներդրում: ▪ Բենչմարքինգի իրականացման քաղաքականության առկայություն: ▪ Ուսանողների ուսումնական բեռնվածության արտահայտում ECST կրեդիտներով: ▪ Կրթական ծրագրերի՝ ակնկալվող վերջնարդյունքների բավարար մակարդակ կրթական հաջորդ աստիճանի ուսուցման համար: ▪ Բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայություն: ▪ ԷԴՓ փաթեթների կիրառում: ▪ Մանկավարժական, ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման լայն հնարավորություն: ▪ Դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների կիրառում: ▪ Գիտահետազոտական գործունեության արդյունքների բավական բարձր ցուցանիշ: ▪ Ներբուհական դրամաշնորհների, ինչպես նաև ՀՀ ԳԿ-ի կողմից ֆինասավորվող թեմաների առկայություն:	▪ Գնահատման մեթոդների անկատարություն: ▪ Առաջատար ԲՈՒՀ-երի հետ ուսանողների և դասավանդողների փոխանակման պայմանագրերի բացակայություն: ▪ Կրթական ծրագրերի մշակման գործընթացում դասավանդողների իրազեկվածության և մասնակցության ցածր մակարդակ: ▪ Գրագողության դեմ պայքարի արդյունավետ մեթոդների, ակադեմիական ազնվության բավարար մակարդակի ապահովման մեխանիզմների անկատարություն: ▪ ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում արտաքին շահակիցների թույլ ներգրավվածություն: ▪ ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայություն: ▪ ՄԿԾ-ներում կամընտրական դասընթացների չափաբաժնի անբավարարություն, պրակտիկաների պլանավորման ցածր մակարդակ և կրեդիտների քիչ հատկացում: ▪ ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար ▪ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ժամանակակից պահանջներին ոչ լիարժեք համապատասխանություն: ▪ Բոլոնյան համակարգով ուսանողների շարժունության բացակայություն՝ պայմանավորված նույն մասնագիտության մեջ ՄԿԾ-ներում դասավանդվող առարկաների ու կրեդիտների մեծ տարբերությամբ: ▪ Դասախոսական և ուսանողական համակազմերի օտար լեզուների թույլ իմացություն:

Հնարավորություններ (Opportunities)	Վտանգներ (Threats)
▪ Համագործացություն առաջատար բուհ-երի հետ: ▪ Արտաքին շահակիցների մասնակցություն ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում: ▪ ՄԿԾ-ների հրապարակայնություն: ▪ Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականության մշակում: ▪ Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության մշակում: ▪ Շրջանավարտներից և պրակտիկանտ ուսանողներից արտաքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններ: ▪ Դասավանդման որակից և արդյունավետությունից, ուսումնառությունից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրություններ:	▪ Պրոֆեսորադասախոսական կազմի ցածր աշխատավարձ: ▪ Պրոֆեսորադասախոսական կազմի ծերացումը (որոշների մոտ զառամախտ): ▪ Դեմոգրաֆիական խնդիրների պատճառով դիմորդների թվի նվազում: ▪ Տարածաշրջանում PR նյութերի հրապարակման և տարածման ▪ սահմանափակություն: ▪ ՄԿԾ-ների իրականացման և բարելավման համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման թույլ աջակցություն: ▪ Աշխատաշուկայում պահանջարկի փոփոխություններով պայմանավորված ՄԿԾ-ների վերանայման արտաքին շահակիցների թույլ արձագանք:

Մասանագիտական կրթական ծրագերի բարելավման նպատակով ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցել է բուհ-ում իրականացվող վերապատրաստումներին: Վերապատրաստումների արդյունքում լրամշակվել և բարելավվել են մասանագիտական կրթական ծրագերի մասնագրերը, առարկայական նկարագրիչները, թեմատիկ օրացուցային պլանները: Վերանայվել են ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները: Յուրաքանչյուր դասընթացի համար մշակվել են հանձնարարականներ:

Բոլոր ամբիոնում ըստ անհրաժեշտության, կազմակերպվել են մեթոդական հանձնաժողովի նիստեր, որի ժամանակ քննարկվել են ՄԿԾ-ների լավարկման վերաբերյալ մի շարք հարցեր:

ԲՈՒՀ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2022-2023 հաշվետու ուսումնական տարում Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի հետ համատեղ իրականացվել են դիմորդների հավաքագրման որոշակի միջոցառումներ: Սահմանված ժամանակացույցի համաձայն այցեր են իրականացվել Շիրակի մարզի դպրոցներ՝ ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով: Շիրակի մարզի մի շարք դպրոցների սաներ հյուրընկալվել են համալսարանում ամառային դպրոցի շրջանակում: Ամբիոնի դոցենտներ, ֆ.մ.գ.թ. Մ. Մութաֆյանի և Գ. Հայրապետյանի կողմից համալսարանի բակալավրի կրթական ծրագրի առկա և հեռակա համակարգերի տարբեր մասնագիտությունների 2023-2024 ուստարվա դիմորդների հետ իրականացվել են անվճար խորհրդատվական դասընթացներ:

ԲՈՒՀ-գործատու համագործակցության շրջանակներում ակտիվ աշխատանքներ է իրականացրել Տնտեսագիտության ամբիոնը: Բակալավրի կրթական ծրագրերի կազմման և բարելավման նպատակով ստեղծված մեթոդական հանձնաժողովներում ընդգրկվել են քաղաքի լավագույն մասնագետ-գործատուները:

Գործատուների հետ հանդիպումների արդյունքում եղել են առաջարկություններ: Գործատու Ռ. Սարգսյանը առաջարկել է «Կառավարում /ըստ ոլորտի/» մասնագիտության գծով ուսումնական պլանով նախատեսված արտադրական պրակտիկաներն արդյունավետ կերպով իրականացնելու համար «Կամուրջ» վարկային կազմակերպության հետ կնքել պայմանագիր:

Այս առումով անչափ կարևոր է Եվրամիության աջակցությամբ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում իրականացվող «Էրազմուս+» ծրագրի շրջանակում 2022-23 ուսուստարում մեկնարկած «Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) ներդրում Հայաստանի և Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում» (WBL4JOB) նախագիծը: Ծրագրի նպատակն է եվրոպական փորձի տեղայնացմամբ աշխատանքի վրա հիմնված բուհական կրթության նոր քաղաքականության ներդրումը, որի փորձարկումը հնարավորություն է տվել մշակելու համապատասխան իրավական ակտեր և բարձրագույն կրթության ընդհանրական մոդել:

WBL4JOB նախագծի կոնսորցիումը ներառում է 12 կազմակերպություն, այդ թվում՝ պետական և հանրային կառույցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ Հայաստանից, Մոլդովայից, Ֆրանսիայից, Բելգիայից և Ավստրիայից:

«Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) ներդրում Հայաստանի և Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում» (WBL4JOB) նախագիծը ներկայացրել է

Հայաստանի ֆրանսիական համալսարանը, որը «Էրազմուս+» ծրագրի հայտարարած մրցույթում հաղթող է ճանաչվել և ստացել համաֆինանսավորում (նախագծի մանրամասներին կարելի է ծանոթանալ՝ այցելելով նախագծի կայք՝ www.wbl4job.com):

Նախագծի մեկնարկին նվիրված առցանց հանդիպման ժամանակ մասնակիցները քննարկել են ծրագրի իրականացման, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելի մշտադիտարկման և հաշվետվողականության մեթոդաբանությունը՝ կարևորելով մասնակից երկրներում այս ոլորտի զարգացման գործընթացում ԵՄ պետություններում կիրառված լավագույն փորձի կիրառումը:

ՇՊՀ-ի ուսանողները ԱՀՈՒ-ի շրջանակում ձեռք են բերել իրենց առաջին աշխատանքային փորձը առաջատար բանկերում: Շիրակի պետական համալսարանի կառավարում բաժնի 4-րդ կուրսի ուսանողները բացառիկ հնարավորություն են ստացել «Էրազմուս+» ծրագրի «Շրջանավարտների աշխատունակությունը բարձրացնելու նպատակով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ներդրում Հայաստանի և Մոլդովայի բարձրագույն կրթության համակարգերում» (WBL4JOB) նախագծի շրջանակում իրենց ուսումնական վեջին տարին որպես աշխատակից լինել ՀՀ-ի առաջատար բանկերում՝ մասնավորապես «ԱԿԲԱ» բանկ, «Ինեկոբանկ», «Ամերիա» բանկ, «ԱՅ ԴԻ» բանկ: Ուսանողներն իրենց նախընտրած բանկերին ներկայացրել են իրենց կենսագրությունը և մոտիվացիոն նամակը, այնուհետև բանկերն էլ անցկացրել են հարցազրույց և թեստավորում, ինչպես նաև ընտրել են իրենց ապագա աշխատակիցներին՝ 5 ուսանող «ԱԿԲԱ» բանկ, 1 ուսանող «Ինեկոբանկ», 3 ուսանող «ԱՅԴԻ» բանկ: Ուսանողները 4 ամիս բանկում աշխատել են որպես աշխատանքային պայմանագրով աշխատակից, իսկ նրանց ավարտական թեման առնչվել է տվյալ բանկի հիմնախնդիրների բացահայտմանը և լուծման ուղիների մշակմանը: Նշենք, որ ծրագրի ավարտին 2 ուսանող ընդունվել է ԱԿԲԱ բանկ, ևս 1 ոսանող աշխատանքի է ընդունվել ԱԿԲԱ բանկում: Ուսանոների գնահատումը իրկանացվել է գործատուի և համալսարանի ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքի արդյունքում,մասնավորապես դասընթացների տեսական մասը գնահատվել է դասախոսի կողմից, իսկ գործնական մասը՝ դուալ ծրագրի պատասծանատուի և բանկի մենթորի կողմից:

ԱյԴի բանկում ծրագրին մասնակոցող ուսանողը մասնակցել է բանկի կողմից կազմակերպվող վերապատրաստման դսընթացին և ստացել վկայական: Իսկ մնացած ուսանողների տվյալները ներառվել են բանկերի տվյալների բազայում:

Սա առաջին փորձն է Շիրակի մարզի բարձրագույն ուսումնական հաստատատությունում, երբ գործատուների հետ համատեղ իրականացվում է կրթական ծրագիր՝ հնարավորություն ընձեռելով թե՛ գործատուներին, թե՛ ուսանողներին, թե՛ համալսարանին ներկայացնել իրենց խնդիրները և համատեղ մշակել լուծումներ:

2022-2023 թթ. ուսանողների թվաքանակի վերլուծությունը ըստ ամբիոնում թողարկվող մասնագիտությունների ցույց տվեցին, որ վերջին հինգ տարում դիմորդների թիվը հուսադրող չի, բացի «Սերվիս» մասնագիտությունից: Սա շատ անհանգստացնող իրողություն է, որն ունի և՛ օբյեկտիվ (արտագաղթ), և՛ սուբյեկտիվ (համալսարանի վարկանիշի նվազում, կրթության որակի անկում և այլն) պատճառներ:

ԲՈՒՀ-գործատու համագործակցության շրջանակներում զգալի աշխատանք է կատարել նաև «Աշխարհագրության և սերվիսի» ամբիոնը: Ամբիոնի դասախոսները այցելել են քաղաքի ավագ դպրոցներ ներկայացնելով մասնագիտական կողմնորոշմանը վերաբերվող զեկույցներ: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ամբիոնը կատարել է մի շարք առաջարկություններ: Առաջին հերթին անհրաժեշտ է դպրոցներում մասնագիտական կողմնորոշում սկսել ոչ թե ավագ, այլ հիմնական դպրոցից: Հիմնական դպրոցների հետ կնքելով համագործակցության պայմանագրեր՝ ամբիոնի դասախոսների կողմից անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր ամբիոնի մասնագիտությունների գծով հետաքրքրվածության բարձրացման և լրացուցիչ գիտելիքներ ստանալու ուղղությամբ:

Ավագ դպրոցների աշակերտների համար շարունակել լրացուցիչ պարապմունքները ընդունելության մուտքի հաղթահարման նպատակով: Ցանկալի է ստեղծել կարճ տեսահոլովակ ամբիոնի աշխատանքային գործունեության վերաբերյալ, ինչես նաև ներկայացնել ամբիոնի գործունեությունը տարբեր հարթակներում:

Հիմնական խնդիր է հանդիսանում Շիրակի մարզի համայնքների դպրոցների շրջանավարտների ներգրավվածությունը կազմակերպվող պարապմունքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործունեությունը 2022-2023 ուստարում միտված է եղել ուսումնական ու գիտական աշխատանքների իրականացմանը:

Ամբիոնները պարբերաբար վերանայել են մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ) կառուցվածքային բաղադրիչները, մասնավորապես ուսումնական պլաններում կատարելով համապատասխան փոփոխություններ՝ պայմանավորված աշխատաշուկայի պահանջներով:

Ուսումնառողների թվաքանակի տարեցտարի նվազման պատճառով ֆակուլտետի որոշ մասնագիտությունների հայտագրումը վտանգված է: Պատճառներից մեկը հանդիսանում է բնագիտամաթեմատիկական հոսքի նկատմամբ դիմորդների նվազ հետաքրքրվածությունը, բնակչության արտագաղթը, դիմորդ-շրջանավարտների քանակի տարեցտարի նվազումը:

Ամբիոններն այս առումով շատ անելիքներ ունեն: Առաջին հերթին անհրաժեշտ է դպրոցներում մասնագիտական կողմնորոշում սկսել ոչ թե ավագ, այլ հիմնական դպրոցից: Հիմնական դպրոցների հետ կնքելով համագործակցության պայմանագրեր՝ ամբիոնի դասախոսների կողմից անհրաժեշտ է իրականացնել որոշակի քայլեր ամբիոնի մասնագիտությունների գծով հետաքրքրվածության բարձրացման և լրացուցիչ գիտելիքներ ստանալու ուղղությամբ: Որոշակի թեմաներով դպրոցներում դասախոսների կողմից անցկացնել դասախոսություններ, կազմակերպել հետաքրքրաշարժ միջոցառումներ, վիկտորինաներ և այլն: Ավագ դպրոցների աշակերտների համար շարունակել լրացուցիչ պարապմունքները ընդունելության մուտքի հաղթահարման նպատակով: Հիմնական խնդիր է հանդիսանում Շիրակի մարզի համայնքների դպրոցների աշակերտների ներգրավվածությունը կազմակերպվող պարապմունքներին: Աշխատաշուկայում շրջանավարտին ավելի լայն հնարավորություն ստեղծելու նպատակով իրականացնել լրացուցիչ դասընթացներ՝ շնորհելով վկայականներ, յուրաքանչյուր մասնագիտության համար կազմել ուսանողի ուղեցույց և այլն:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ֆակուլտետի ամբիոններում իրականացված աշխատանքը բավարար է, սակայն անհրաժեշտ է լրացուցիչ ջանք վերևում նշված խնդիրների լուծման համար:

Հավելված 1: Դիմորդների շարժը: 2022-2023 ուստարի

№	Կրթական ծրագիր (առկա)	Դիմորդների թիվը	Ընդունվածների թիվը	Չընդունվածները (%)
1	Հաշվապահական հաշվառում	0	0	**100**
2	Կառավարում	14	11	21,4
3	Կենսաբանություն	4	3	25,0
4	Աշխարհագրություն	0	0	**100**
5	Մաթեմատիկա	0	0	**100**
6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	1	0	**100**
7	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	7	4	42,8
8	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	8	5	37,5
9	Դեղագործական քիմիա	6	3	50,0
10	Սերվիս	25	21	16,0
	Ընդամենը	**65**	**47**	**27,7**
	Կրթական ծրագիր (հեռակա)			
1	Կառավարում	24	7	70,8
2	Դեղագործական քիմիա	2	2	0,0
3	Քարտեզագրություն և կադաստրային գործ	0	0	**100**
4	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	9	3	66,6
5	Սերվիս	16	9	43,7
	Ընդամենը	**51**	**21**	**58,8**
	Մագիստրատուրա			
1	Աշխարհագրություն	5	4	20,0
2	Կայուն զբոսաշրջություն	4	4	0,0
3	Կենսաբանություն	1	1	0,0
4	Կենսատեխնոլոգիա	5	5	0,0
5	Մաթեմատիկա	7	7	0,0
6	Ֆիզիկա	6	4	33,3
7	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	0	0	**100**
8	Կառավարում	4	14	350
	Ընդամենը	**32**	**39**	

Հավելված 2:

Ընդունելության քննությունների արդյունքները
2022-2023 ուստարի

Առկա ուսուցում					
Ամբիոն	**Մասնագիտություն**	**Անվճար ուսուցում**	**Առավելագույն բալը**	**Վճարովի ուսուցում**	**Առավելագույն բալը**
Աշխարհագրության և սերվիսի	Աշխարհագրություն	-	-	-	-
	Սերվիս	5 ուսանող	**39.00**	16 ուսանող	28.75
Կենսաբանության և քիմիայի	Կենսաբանություն	1 ուսանող	36.50	2 ուսանող	24.25
	Դեղ. քիմիա	1 ուսանող	27.75	2 ուսանող	25.25
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ	ԻԿՄ	3 ուսանող	**40.00**	1 ուսանող	17.25
	Տ.Տ.	4 ուսանող	31.50	1 ուսանող	18.00
Տնտեսագիտության	Կառավարում	3 ուսանող	32.00	8 ուսանող	23.25
	Հաշվապահ. հաշվ.	-	-	-	-
Միջինը			**34.4**		**22,8**
Հեռակա ուսուցում					
Աշխարհագրության և սերվիսի	Սերվիս	-	-	9 ուսանող	25.00
Կենսաբանության և քիմիայի	Դեղ. քիմիա	-	-	2 ուսանող	19.00
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ	Տ.Տ.	-	-	3 ուսանող	32.75
Տնտեսագիտության	Կառավարում	-	-	7 ուսանող	21.50
Միջինը			**-**		**24,6**

Հավելված 3

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մեթոդական խորհուրդները: 2022-2023 ուստարի:

	Անուն ազգանուն	Կարգավիճակը	Աշխատանքի (ուսման) վայրը
	«Կենսաբանություն»		
	Ադամյան Նելլի - կ.գ.թ., դոցենտ,	ՄԿԾ- ի պատասխանատու	ՇՊՀ
	Պետրոսյան Կարինե կ.գ.թ., դոցենտ,	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Սեդա Համբարձումյան	Գործատու	Գյումրու թիվ 15 դպրոց, տնօրեն
	Ղազարյան Անի - Կենսաբանություն	Ուսանող բակ. 3-րդ կուրս	ՇՊՀ
	Քոչարյան Նաիրա -Կենսաբանություն	Շրջանավարտ	ՇՊՀ
	«Դեղագործական քիմիա»		
	Լուսինե Մելքոնյան- կ.գ.թ, դոցենտ,	ՄԿԾ-ի պատասխանատու	ՇՊՀ
	Խաչատրյան Արմենուհի - քիմ. գիտ, թեկն.	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Պետրոսյան Լիլիթ	Գործատու	Ա/Ձ Լիլիթ Պետրոսյան դեղատուն, տնօրեն
	Գասպարյան Թամարա-	Ուսանող բակ. 2-րդ կուրս	ՇՊՀ
	Կարապետյան Ելենա	Շրջանավարտ	ՇՊՀ
	«Աշխարհագրություն»		
	Ավետիսյան Գայանե- ա. գ. թ., դոցենտ	ՄԿԾ- ի պատասխանատու	ՇՊՀ
	Ամազարյան Աիդա – ա. գ. թ., դոցենտ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Գրիգորյան Արմինե	Գործատու	Գյումրու թիվ 11 դպրոցի տնօրեն
	Գրիգորյան Լիանա	Աշխ.բակ. 3-րդ կուրս	ՇՊՀ
	Հովհաննիսյան Լիլիթ	Շրջանավարտ	ՇՊՀ ավագ դպրոցի աշխարհագր. ուսուցիչ
	«Սերվիս»		
	Վալեսյան Անահիտ-ա. գ. թ., դոցենտ	ՄԿԾ- ի պատասխանատու	ՇՊՀ
	Ներսիսյան Արմեն - ա. գ. թ. , դոցենտ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Իսահակյան Կառլեն	Գործատու	«Կառլեն Իսահակյան » ԱՁ տնօրեն
	Մխիթարյան Աննա	Սերվիս, բակ. 3-րդ կուրս	ՇՊՀ
	Խաչատրյան Աղավնի	Շրջանավարտ	Անշարժ գույքի գործակալության մենեջեր
	«Զբոսաշրջություն»		
	Գրիգորյան Անահիտ	ՄԿԾ -ի պատասխանատու	ՇՊՀ

	Ներսիսյան Արմեն - ա. գ. թ., դոցենտ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Սրտաշյան Վարդան	Գործատու	«Արաքս 95» ՍՊԸ տնօրեն
	Դավթյան Տիգրան	Զբոս., բակ. 3-րդ կուրս	ՇՊՀ
	Խաժակյան Մարիամ-	Շրջանավարտ	«Բիզնես Էլիտա» դասավանդող ուսուցիչ
«Քարտեզագրություն և կադաստրային գործ»			
	Վալեսյան Անահիտ- ա.գ.թ., դոցենտ	ՄԿԾ -ի պատասխանատու	ՇՊՀ
	Հարությունյան Քաջիկ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Կարապետյան Ջոն	Գործատու	ՀՀ ԳԱԱ ԵԻՍԻ տնօրեն
	Հակոբյան Անի	Ք./կադ., բակ 3-րդ կուրս	ՇՊՀ
	Գրիգորյան Արուսյակ	Շրջանավարտ	ՇՊՀ
«Կայուն զբոսաշրջություն» մագիստրատուրա			
	Վալեսյան Անահիտ- ա.գ.թ., դոցենտ	ՄԿԾ -ի պատասխանատու	ՇՊՀ
	Ներսիսյան Արմեն - ա. գ. թ., դոցենտ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Սրտաշյան Վարդան	Գործատու	«Արաքս 95» ՍՊԸ տնօրեն
	Հարությունյան Անուշ	Կայուն/զբոս., 1-ին կուրս	ՇՊՀ
	Սահակյան Անի	Շրջանավարտ	«Sanitur» տուրգործակալ. գիդ-ուղեկցորդ
«Աշխարհագրություն» մագիստրատուրա			
	Ավետիսյան Գայանե- ա. գ. թ., դոցենտ	ՄԿԾ- ի պատասխանատու	ՇՊՀ
	Ամազարյան Աիդա – ա. գ. թ., դոցենտ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Մարտիրոսյան Արմեն	Գործատու	Ակադեմիական վարժարանի տնօրեն
	Հակոբյան Աստղիկ	Աշխ., մագ. 1-ին կուրս	ՇՊՀ
	Հովհաննիսյան Հրաչյա	Շրջանավարտ	«Ավստ. զարգաց. հիմնադրամ» ՏԱԽ մենեջեր
«Կառավարում /ըստ ոլորտի/»			
	Անի Սահակյան- տնտ.գիտ.թեկնածու,	ՄԿԾ-ի պատասխանատու	ՇՊՀ
	Աիդա Ջանիբեկյան	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Ռուդիկ Սարգսյան	Գործատու	«Կամուրջ» վարկային կազմակ. Գ/մ տնօրեն
	Միլենա Մուրադյան	«Կառավարում» 3-րդ կուրս	ՇՊՀ
	Վարդուհի Հուրոյան	Շրջանավարտ	ՇՊՀ
«Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/»			
	Անի Սահակյան- տնտ.գիտ.թեկնածու,	ՄԿԾ-ի պատասխանատու	ՇՊՀ
	Աիդա Ջանիբեկյան	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Ռուդիկ Սարգսյան	Գործատու	«Կամուրջ» վարկային կազմակ. Գ/մ տնօրեն

	Անահիտ Ավագյան	Հ/ հաշվ. բաժին, 4-րդ կուրս	ՇՊՀ
	Լիանա Կիրակոսյան	Շրջանավարտ	ՇՊՀ
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ»			
	Գևորգ Ասատրյան	ՄԿԾ-ի պատասխանատու	ՇՊՀ
	Սպարտակ Սողոյան-մ.գ.դ., պրոֆեսոր	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Աղասի Գյուրջողլյան	Գործատու	«Աննանիկս» ՍՊԸ տնօրեն
	Արմինե Մազմանյան	«ՏՏ» 4 կուրս:	ՇՊՀ
	Էլյա Ժամակոչյան	Շրջանավարտ	ՇՊՀ
«Ինֆորմատիկա»			
	Գևորգ Ասատրյան	ՄԿԾ-ի պատասխանատու	ՇՊՀ
	Սպարտակ Սողոյան-մ.գ.դ., պրոֆեսոր	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Կարեն Դարբինյան	Գործատու	ՇՊՀ ավագ դպրոց
	Սոնա Հովհաննիսյան	«Ինֆորմատիկա» 4 կուրս	ՇՊՀ
	Սևակ Պապոյան	Շրջանավարտ	ՇՊՀ
	«Մաթեմատիկա» մագիստրատուրա		
	Սամվել Սարգսյան-ֆ.մ.գ. դ., պրոֆեսոր,	ՄԿԾ-ի պատասխանատու	ՇՊՀ
	Վարդան Մանուկյան-ֆ.մ.գ.թ., դոցենտ	Դասախոսական կազմ	ՇՊՀ
	Կարեն Դարբինյան	Գործատու	ՇՊՀ ավագ դպրոց
	Մելինե Հարությունյան	Մաթեմ. 1 կուրս	ՇՊՀ
	Նինա Կոստանյան	Շրջանավարտ	ՇՊՀ

Նոր գույքով հագեցված կենսատեխնոլոգիայի լաբորատորիա: «Աբիոնետ» ծրագիր:

Քիմիայի լաբորատորիա։

Նոր պրոյեկտորով կահավորված լսարան։

Նոր պրոյեկտորով կահավորված լսարան։

Նոր պրոյեկտորով կահավորված լսարան։

Նոր պրոյեկտորով կահավորված լսարան:

Նոր պրոյեկտորով կահավորված լսարան:

Նոր պրոյեկտորով կահավորված լսարան։